

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՒԷՊ, 26 ՀՈԿՏ., 1929

ԹԻԻ 20-21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԻԹԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԴՈՒԼԵՆԵՐՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԵՓՐԱՏ ԴՈՒԼԵՃ

ՎԵՐ. Հ. Հ. ՐԻԿՍ

ԵՓՐԱՏ ԴՈՒԼԵՃ

Ա. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՍԲ. ՊՕՂՈՍ ԴՈՒԼԵՃԻ ՅՈՒՇԵՐԷՍ

ՏՈՔԹ. ՖԻԼԻՊ ՅՈՒԼՆԱՆԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԴՈՒԼԵՃ

ՓՐՕՖ. Զ. Ա. ՊԷԶՃԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Ս. ԼԱԼԷԱՆ

Ս. ԱՐԻՍԱԿԷՍ ՊԱՐԹԵԻ

ՌՇՏՈՒՆԻ

ԴԱՐԲԻՆ ԴԱՆԻԷԼ

Բ. Ե. Մ.

ՀՈԿՏԵՄԲԵՐ 11

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԴՈՒԼԵՃ» ՀԱՒԷՊ

ՀՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կրօնաքարոյական, կրթական գիտական պարբերաբերթ.

Տէր և Տնօրէն

Վեր. Կ. Յ. Յարութիւնեան

Պատասխանատու խմբագիր

Տ. Ճ. Խրլորեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՄԱՆՆԵՐ.—

Սուրբիա, տարեկան 1.50 Սուրբական ոսկի:

Արտասահման, տարեկան 1.50 տոլար:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Կը փնտռուի բնիկ Արարկիրցի Վարդանոյ՝ ծնեալ Տէր Յովհաննէսեանը, այժմ իբր 30 տարեկան, մօր կողմանէ Տէր Ղեւոնդի թոռ, իսկ հօր կողմանէ՝ Տէր Յովհաննէսեաններէ:

Փնտռուին է՝ իբ մեծ եղբայրը Յովհաննէս Տէր Յովհաննէսեանը, նոյնպէս Արարկիրցի, այժմ իբր 33 տարեկան:

Կը խնդրուի տեղեկացնել՝ առ.—

J. Bulla,

21, Rue Poriaz,

Pangalti,

Istambul

(Turquie)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ

ԾԱՂԿԱՍՏԱՆ

Գ. ՇԱՐՔ

ԽԱՐՈՒՐ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ԾԱՂԿԱՍՏԱՆԻ Գ. ՇԱՐՔԸ

Կուզայ աւելինալ Ա. Է. Բ. ՇԱՐՔԵՐՈՒՆ վրայ, որոնց արձակ քերթուածները իրենց արուեստով, ազատ ու արեւոտ շունչով թեր ու գէժ խօսեցնել տունն աւանդուրք Հայ Մամուլին մէջ:

Այս հասցիին գիւնն է՝ Յր. 10

Դիմել Պօղարեան Գրատունը Հալէպ:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

Նոյեմբեր 3

ՅԱՐԳՈՒՆՔ ՀԱՆԴԷՊ ՕՐԻՆԱԻՈՐ

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Դաս—Մարկ. 12. 13-17: Հոովմ. 13.

1-7: Ա. Պետ. 2. 13-16:

6—Նոյ. 10

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ

Դաս—Եսայ. 2. 2-4: Գործ. 17:

22-28: Յով. 4. 20-21:

Քանգի երկիր Տէրօջը գիտութիւնով

պիտի լիցուի, ինչպէս ջուրերը ծովը կը

ծածկեն: Եսայ. 11. 9:

7—Նոյ. 17

ՈՒՐԻՇ ՅԵՂԵՐՈՒ ՄԱՐԴՈՅ ՀԵՏ ԱՊՐԻԼ

Դաս—Գործ. 10. 9. 15, 30-35: Դավ. 3. 28, 29:

Ամէն ազգի մէջ առ անկէ կը վախ-

նայ ու արդարութիւն կը գործէ, անոր

ընդունելի է: Գործ. 10. 34, 35:

ՄՍՍՍԱՆՔ

1930

ՊԱՏԻ ՕՐՈՑՈՅՐ

հանդերձ

Սրբազան Մտածմունքներով

Բ. ՏԱՐԻ

Հատը՝ 8 դհ. Արծ. Սուրբոյ համար

Պատրաստեց՝ ՂԱԶԱՐ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՒԷՊ, 26 ՀՈԿՏ., 1929

ԹԻՒ 20-21

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԳՈՒԼՔՆԵՐՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1860 թուականներէն վերջ նոր բառ մը սկսաւ լսուիլ Մերձաւոր Արեւելքի մէջ, — Գուլքն։ Մ. Արեւելքի քաղաքներուն մէջ ծագում առաւ ան։ Շուտով այս անունին տեղը գրաւեցին բարձրագոյն դաստիարակութեան հաստատութիւններ նախ և Պոլսոյ և Պէյրութի մէջ եւ ապա ժամանակագրական կարգով Ալեքսանդրի, Խարբեղի, Մարզուանի, Տարսոնի, Զմիւռնիոյ, Գոնիայի, Սեբաստիոյ և Վանի մէջ։ Այս Գուլքները, իբրեւ ամբողջութիւն անտեսուելով, մեծ հռչակ շահեցան եւ կարեւոր ազդեցութիւն մը բանեցուցին իրենց շրջաններուն կիանքին վրայ։ Կ'արժէ այս առթիւ յետադարձ ակնարկ մը նետել եւ հասկնալ թէ ինչպիսի՞ ծառայութիւններ մատուցել են անոնք։

1. Գուլքներու առաջին պատուը իրենց ընթացաւարտներն են։ Այս տուղիքը կարգացող իւրաքանչիւր ուսումնաւարտ սա հարցումին թող պատասխանէ. «Եթէ ես գուլքական կրթութիւն մը չ'աւելի ի՞նչ եւ ո՞ւր պիտի ըլլայի այսօր»։ Գուլքներու առաջին ծառայութիւնը իրենց ուսանողներուն եղած է։

2. Գուլքնի ուսումնաւարտներուն կիանքն ու գործունէութիւնը բաց զիրք մը կը կազմեն, զոր ամէն ոք կրնայ կարգաւ։ Երկար տարիներ անոնց ուրիշներուն մատուցած ծառայութիւնները ամէնուն ծանօթ են։ Ուսումնաւարտներու այս ծառայութեան միջոցաւ Գուլքները Մերձաւոր Արեւելքի ժողովուրդ-

ներուն ծառայած են։ Եւ եթէ երբեք այս ծառայութիւնները — հովիւներու, բժիշկներու, ուսուցիչներու, օրէնսդէտներու, գեղագործներու, վաճառականներու ծառայութիւնները — արժէքաւոր կը նկատենք, պէտք է խորհիւք որ անոնք միւսնոյն ատեն գուլքներու ծառայութիւններն են, որոնց օգուտը կը քաղենք եւ որոնց մենք երախտապարտ ենք։

3. Գուլքները ուրիշ այնպիսի ծառայութիւններ մատուցած են, որոնց գնահատումը այնքան ալ դիւրին չէ։ Ասոնցմէ մէկն է վերջին 70 տարիներու միջոցին Մերձ. Արեւելքի բոլոր ժողովուրդներուն մէջ կրթութեան տրուած թափը։ Դպրոցներու եւ դպրոցականներու թիւին, կատարուած գործի քանակին եւ սրակին, կրթութեան մասին ժողովրդային հետաքրքրութեան, կրթութեան համար ծախսուած գրամին մէջ եղած բոլոր յատաճդիմութիւններու մէջ գուլքներու ազդեցութիւնը իր որոշ տեղը ունեցած է։

4. Գուլքները անձայն բայց զօրաւոր ազդեցութիւն մ'ունեցան իրենց շրջանին ժողովուրդին նիւթական յառաջդիմութեան մէջ։ Նոր գործիքներու, մեքենաներու, առեւտրական եւ երկրագործական նոր մեթոտներու գործածումին մէջ անոնք իրենց բաժինը ունին։ Անոնք անձայն, հետազօտումը աւելի դժուար բայց իրական ազդեցութիւն մ'ունեցած են ընկերային սովորութիւններու, ընթացիկ զաղափարներու եւ բարոյական չափանիշներու վրայ։

5. Գուլքները սովորաբար իրենց ազդեցութիւնը ունեցած են տարբեր ցեղե-

րէ, յարաճուանութիւններէ և կրօններէ երիտասարդները իրարու քով բերելու մէջ, և հասարակաց կեանք մը միասին ապրիլը անոնց սորվեցնելու մէջ: Կարգ մը զօլէճներ, մանաւանդ Բօպէրթ Գոլէճ և Պէյրութի Համալսարանը, առաջնակարգ դեր կատարած են այս դասը սորվեցնելու մէջ, որուն այնքան պէտք ունին Մերձաւոր Արեւելքի զանազան խմբաւորումները և բաժինները:

6. Գոլէճները իրենց ազդեցութիւնը միշտ ցուցուցած են յատակ մասածումի, բարձր նկարագրի և հոգեւոր կրօնքի արտադրումին մէջ: Այս հաստատութիւններու և անոնց մթնոլորտին հետ կապակցութիւն ունեցող անհատներու կեանքերը այս մասին շատ ազդու եղած են: Մէկ կողմ ձգելով այն հարցը թէ աշակերտները որչա՛փ այս ազդեցութիւններուն համեմատ ապրած են, վրտահօրէն կ'ըսենք թէ անոնց առջև խոր և հաւասարակշռեալ հոգեւոր կեանքի մը զաղափարականը գրուած է: Այն ուսանողները՝ որոնք այս զաղափարականը ընդունած են, իրենց բաժինը ունեցած են կրօնական հարցերու մասին հանրային կարծիք մը յառաջ բերելու մէջ, ներդաշնակ համաձայնութեամբ այդ խտէալին հետ: Անոնք միայն կզերականներ չեն եղած, այլ ամէն առպարէզէ

մարդիկ, որոնց կեանքը հոգեւոր հիմ մը և նպատակ մ'ունի:

7. Այս Գոլէճները բնական կերպով աւետարանական եկեղեցիներու հովիւներուն և ուսուցիչներուն մէկ մեծ մասը հայթայթած պիտի ըլլային: Բայց անոնք զատարարակած են այն պիտի մարդիկ՝ որոնք տարբեր համայնքներու հետ կապակցութիւն ունեցող ուսուցիչներ և հոգեւոր պաշտօնեաներ եղած են: Գոլէճները մասնաւոր տեսակէ կրթութեամբ օժտած են այս հոգեւոր առաջնորդները որոնց ծառայութիւնը եղական եղած է:

Բնական է որ մենք անցեալէն պէտք է դիտենք ապագան: Մենք կը փափաքե՞նք, որ այս ազդեցութեանց, այս հանրային բարիքին ծառայող ուսումնականներու, բժիշկներու, ուսուցիչներու և քարոզիչներու յաջորդութիւնը զազրի կամ շարունակուի: Մենք կ'ըզե՞նք այնպիսի հաստատութիւններ, տոգորուած հոգեւոր ներշնչւումով, որուն ներքե կոլէճներու ուսանողները իրենց կրթութիւնը առած են: Եթէ մեր բաղձանքն է որ անոնք շարունակեն, պէտք է որ ատենին, երբ տակաւին ուշ չէ, միջոցներու զիմեք այս շարունակութիւնը ապահովելու համար:

Ճ. Է. ՄԷՐԻԼ.


ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԵՓՐԱՏ ԳՈԼԷՃ

Այսօր Խարբերդի մօտեցող ճամբորդը հեռուէն աւերակ քաղաք մը կը տեսնէ միայն, ուր մղոններ հեռուէն տակաւին կը տեսնուին ճերմակ շէնքերու խումբ մը բոլոր քաղաքին վրայ իշխող զիրքով մը: Ասոնք Եփրատ Գոլէճի շէնքերն են, ներկայիս Թուրք զինուորներու կողմանէ զրաւուած և անխնամութեան պատճառաւ ողբալի վիճակի մատ-

նուած, որոնք հեռուէն կը պարզեն այն տեսարանը որ թելադրած է Գոլէճին նըշանաբանը, — «Քաղաք մը որ լերան վրայ կեցած է, չի կրնար պահուիլ»:

Արմէնիա Գոլէճ հիմնուած է (1878 ին) Տր. Հուրիլի մանսնջ կորովին միջոցաւ և վարդապետ հիմնադրին և անոր շատ կարող Հայ և Ասորի գործակիցներուն միջոցաւ: Գոլէճը սկիզբէն ի վեր հայ-



Եփրատ Գոլէճի շէնքերը եւ Խարբերդի մէկ մասը

կական հղած է. զրեթէ բոլոր աշակերտութիւնը Հայերէ կը բաղկանար, հաստատութեան պաշտօնական լեզուն հայերէն էր. անոր ուղղութիւնը հայկական էր, եւ անոր Սահմանադրութեան տրամադրութեան համեմատ 1925ին անոր վարչութիւնը կատարելապէս հայկական պիտի ըլլար: Ետքը, մասամբ քաղաքական պատճառներով, մասամբ ալ անոր մէջ գործողներուն ընդլայնող հորիզոնին պատճառաւ փոփոխութիւն մը կատարուեցաւ եւ անոր անունը «Եփրատ Գոլէճ»ի փոխուեցաւ, սա յոյսով որ հաստատութիւնը ուրիշ լեզուներէ եւ ցեղերէ մարդերուն ալ ծառայէ: Այսուհանդերձ մինչեւ Գոլէճի փակման թուականը, 1915, աշակերտութիւնը եւ ուսուցչական մարմինը զրեթէ ամբողջութեամբ անոր դործած շրջանին 175000 Հայերու մէջէն կ'առնուէին:

Գոլէճի ծրագրին էր այս ժողովուրդին պէտքերուն գոհացում տալ. ան երբէք չփորձեց Ամերիկեան ուսումնական

ծրագրով եւ դասընթացքով Ամերիկեան հաստատութիւն մ'ըլլալ: Ան երբէք չը յաւակնեցաւ Պսակաւոր Արուեստից (A. B.) տիպոսը տալ: Անոր ուսումնական ծրագրին տիրող սկզբունքն էր Հայաստանի ժողովուրդին համար ըլլալ ինչ որ առաջնակարգ գոլէճ մը Ամերիկայի մէջ էր իր շրջանին համար: Ուրիշներով հանդերձ ասոնք էին այն պատճառները, որ Գոլէճը իր շրջանին մէջ խիստ ժողովրդական ըրած էին: Անոր աշակերտութեան թիւը շարունակ կ'աւելնար: Ատեն մը, երբ հարիւրաւոր որբեր Սարգիսի մէջ հաւաքուած էին, Գոլէճի եւ անոր նախապատրաստական կարգերուն մէջ հազարէ աւելի աշակերտներ կային:

Գոլէճին նպատակն էր միշտ ամենադժատ տղուն պատեհութիւն տալ, եւ միշտ կը ջանար ուսանող մը հրեք ետ չճամբել դրամ չունենալուն համար միայն: Միեւնոյն ատեն կանոնը այն էր որ ամէն մէկ աշակերտ իր թոշակը պէտք էր ը-

ման վճարել: Այս երկու կանոններուն ալ հաւատարիմ կարենալ մնալու համար ինքնօգնութեան ճարտարարուեստական բաժին մը կար, ուր մանչերը հիւսնութեամբ, տպարանական և կազմարարի աշխատանքով, թիթեղագործութեան և երկաթագործութեան գանազան ճիւղերուն մէջ գործելով, իսկ աղջիկները գունազան առտնին պարտականութիւններով իրենց ծախքերը հոգալու համար չահելու առիթը կ'ունենային:

Գոլէճի բնորոշ մէկ գիծն էր անոր միշտ քրիստոնեայ հաստատութիւն մը ըլլալը: Ուսուցչական մարմինը ամբող-

ջութեամբ բողոքականներէ չէր կազմուած, բայց Վարչութեան նպատակն էր միշտ ջերմ քրիստոնեաներ հրաւիրել իրր ուսուցիչ կամ ունէ աշխատաւոր գործելու, և միշտ կը ձգտէր Գոլէճի մէջ քրիստոնէական գորաւոր ազդեցութիւն մը պահելու: Այսօր առանհակներով ուսումնաւարտներ և հարկաւոր նախկին սաներ, յրուած աշխարհի ամէն կողմը, կը վկայեն Եփրատ Գոլէճի ազդու գործունէութեան և քրիստոնէական ազդեցութեան:

Պէրոս

Հ. Հ. Րիկլ

ԵՓՐԱՏ ԳՈԼԷՃ

Անցեալին մէջ երբ երկրաբանական փոփոխութիւններ հսկայ երեւոյթներով տեղի կ'ունենային. մէկ օրէն ցամաք մը իջնելով ծովու յատակը կը կազմէր, լայնատարած ջուրերու մէջէն ընդարձակ կղզի մը երեւան գալով նոր երկիր մը կը ստեղծուէր: Երբեմն բնակչութիւններ գետնամոյժ կ'ըլլային, գետեր՝ իրենց ընթացքը փոխելով դէպի խորութիւններ կը հոսէին: Անապատային ո՞րքան փոթորիկներ ուղասիւսներ աւազով ծածկած և կանաչաւէտ երկրամասեր ամայացուցած են: Այսպէս աշխարհս իր երկատասարդական կորովի շրջանի մէջ ահեղ գործունէութեամբ՝ հսկայ զանգուածներ ու տարածութիւններ կը յեղաշրջէր: Բնութեան ուժեր պէսպիսի փոփոխութեանց կենթարկէին տարրերէ կազմուած միծութիւններ, անյայտացնելով և կամ երեւան բերելով զանոնք:

Նիւթական այսպիսի մեծ ձեւափոխութիւններ ոչնչացում չեն այլ ձեւի այլափոխութիւն, շարքերու տախտակաւ յաւաքութիւն, նախկին գոյովիճակի մը կազմալուծումներ են սոսկ: Ծովու յատակը բնակչութեան յարմար երկիր մը՝

ծովամոյն ցամաքամասը ջուրի տարածութիւնը կրող յատակը կրնայ ըլլալ: Եթէ հովիտի մը բնակչութիւնը անյայտանալով կ'ոչնչանայ, միեւնոյն վայրը քաղաքակիրթ ուրիշ ազգին որրանը կըրնայ ըլլալ:

Մտեղծագործութեան անսահման տիեզերք կոչուած գործարանի մէջ՝ քանդում ու ձեւակերպում, աւերում ու վերաշինում, կազմալուծում և համադրութիւն, անէացում ու ի յայտ գալ, ասոնք բոլորը սկզբունք և օրէնքներու գաղտնի գործունէութեանց արդիւնքներն են, մեծ կամքի ու մտքի զեկավարութեան տակ: Որքան ճշմարտութիւններ հունաւոր և սահմանափակ աշքերու առջեւ թաղուն կը մնան:

Ազգերու կեանքի մէջ ալ բնական այսպիսի յեղաշրջումներ կան: Մեծ մտքերու և ազնիւ զգացումներէ համալուած սրտերու կողմէ կազմակերպուած հաստատութիւններ, իրենց երեւնալիք ձեւերը կը փոխեն այս ու այն աննպաստ ազդեցութիւնէ: Պատմութեան էջեր այսպիսի դէպքերու նկարագրութիւններով լեցուն են: Կրքերէ մղուած հե-

ղեղներ մշակայթի բազում ուղիներ խոպանացուցած են: Գաղափարները թեան շատ մը որոշումներ փլատակներու տակ կը մնան՝ ոմանք ալ բոլորովին անյայտ: Շքեղ, փառաւոր պալատներ, կոթողներ, յիշատակարաններ որոնք մտքի ամենագեղեցիկ արտագրութիւններ էին, ազգի մը պաշտամունքին աւարկայ՝ ոտնակոխ եղած են: Վանտաւական, Գողական, Մոնկոլ ու Պարսկական ցեղերու՝ պատմական այսպիսի մարդկային կիկլոպներ, բնութեան աւերիչ ուժերու նման, փոքրած ու աւրջտկած են հաստատութիւններ՝ որոնք ազգի մը երբեմնի փառքն ու յոյսերն եղած էին:

Բոլոր այս յեղաշրջիչ ազդեցութիւններ չեն կրցած ի սպառ վերջացնել միտում ու կարողութիւններ՝ որոնք դարեւուրեւ ընթացքին ծնունդ ստացած են: Հինին տեղ նոր մը՝ աւերակին վրայ ապարանք մը, կոտորելէ ամբողջութիւն մը շինել. մարդ էակին բնագոյն է:

Բնագոյնի արդար օրինակը ծիծառն՝ իր քանդուած բոյնիկը անմիջապէս կը շինէ, որովհետեւ իր բնագոյնի մղումը յուսահատել չի գիտեր, աւերակի առջեւ ողբալ չի գիտեր: Կը ճռուողէ ու կը վերաշինէ: Իր պըտըտիկ խելքին մէջ ընտանիք կազմելու բնագոյն իր մեծագոյն իտէալն է: Նիւթական որեւէ արգելք չի կրնար յաղթահարել իր անպարտելի բնագոյնը:

Մեծ Պատերազմը շատ մը ցեղերու և ազգերու բախտը իրեն խողալիք ըրաւ: Տեսանք բազում աւերակներ: Որքան կեանքեր գազանային կիրքերու զոհ եղան: Սակայն վայրկեան մը չենք վարանիր ըսելու թէ՝ սիրելի ու յիշատակելի այն ճշմարտութիւններ որոնք երբեմնի հաստատութեանց հիմքը եղան ու չընչացած չեն: Հայը մտով ու արիւնքով շատ բան կորսնցուց, սակայն այդ յոռի պայմաններ ըլլան անոնք զրոյն

կամներէն, որոնք տակաւին անդամաւոր կը պահեն ցեղին ամբողջական կեանքը, երբ վերնան ու ստեղծութիւն նպաստաւոր նոր պայմաններ, ազգային աւերի փայլուն գոյազրկման մը պիտի գայ:

Հոկտ. 11, 1926 թուականին քանդուած ու տարազրուած հաստատութեան Յոթիկեանը կը ածնուէր Հալէպի փոքրիկ օրահի մը մէջ: Վտարանդի ու գաղթական Սյնթապի Գուէճի Յոթիկեանը էր որ կը կատարուէր Սուրիոյ հողին վրայ: Իր սաներն էին որ կը ածնէին իրենց սիրելի այն հաստատութեան յիշատակը որ ձեւակերծ, կազմաւորուած ու տեղափոխուած էր քաղաքական փոփոխութիւններու բերմամբ: Վտեմ ապաւորութեամբ համակուեցան ներկաները, խորհելով թէ թէ և ուժեր կը խորտակուին, նիւթական արտաքին ձեւերը կը այլափոխուին, սակայն սկզբունքը և ճշմարտութիւնը չեն մեռնիր: Անմահ է բարոյական ամբողջութիւնը որ առանօք դարբնած է կեանքեր:

Սրտան բանախօսներէն Միսիս Մէրիլ կեղեցիկ ու ապաւորիչ օրինակով մը բացատրեց իրողութիւնը թէ՝ «կան աղբիւրներ որոնց ջուրերը անապատներու մէջ կը կորսուին, սակայն հեռաւոր տեղ մը ի յայտ գալով՝ ուղիներ կը կազմեն»: Այս օրինակը կուտար այն գաղափարը թէ՝ սկզբունքներ ու իտէալներ չեն մեռնիր: Հովէ ու փոթորիկներէ քշուած ճշմարտութեան սերմեր, նպաստաւոր միջավայրի մը մէջ կը ծլին ու կը ծաղկին: Հաստատութեան մը անունը որուն մէջ ծրարուած է ծառայութեան գաղափարը, փլատակներու տակ չի մնար ու փճանար: Գաղափարը կ'ապրի:

Շատ մը տարիներու պատկառանքովն արժանիքի և գնահատման արժանացած Եփրատը, հովիտի մը վերեւ բլրակի վրայ հաստատուած իւր կրթական

ԶԱՒ ԿՈՂՄԸ ՎԵՐԷՆ

1. Վեր. Հ. Հ. Բիկլ
2. Վեր. Վ. Ամիրսանեան
3. Տիար Աշուր Եռասուֆ
4. » Յովհ. Տինկիլեան
5. » Սրմենակ Գոյակիմեան
6. » Տիրան Թէնէքէճեան
7. » Սարգիս Քէօլէեան

ԱՁ ԿՈՂՄԸ ՎԵՐԷՆ

1. Վեր. ձ. Նափ
2. Հայր Կապրէէ
3. Մը. Փ. Լիփինկուս
4. Տիար Ա. Տ. Ղազարեան
5. » Սեդրակ Զուլումեան
6. » Յովհ. Դաւիթեան
7. » Արսէն Մեղքունեան



ՓՐՈՖ. ՍՕՐԻ ԵՒ ՌԵՍՈՒՑԻՉԻ ԵՓՐԱՏ ԴՈՒԷՃԻ

ԿԵԴՐՈՆԸ

1. Մը. Լ. Բիկլ Նախագահ, զապաթը 2. Փրոֆ. Ն. Թէնէքէճեան, 3. Փրոֆ. Կ. Սոլիկեան, 4. Փրոֆ. Յովհ. Պուճիգանեան, 5. Փրոֆ. Տ. Լիւլէճեան, 6. Փրոֆ. Ա. Խաչատուրեան, 7. Փրոֆ. Ս. Որբերեան, 8. Փրոֆ. Խ. Նահիկեան:

Ժառանգութեամբ մշակելի և ծաղկալի կը
ընէ յուսթի դաշտերն: Լուսաւորու-
թեան կեդրոն մը նոյն ատեն խոր գա-
ւառի մը ստաղի նման լոյս կը նշուէր

հեռաւոր վայրեր: Եփրատը օտար հաս-
տատութիւն մը չէր, տուած կրթութիւ-
նը տոհմային՝ որովհետեւ հայ կեանքի
օճախ մը դարձած էր: Հիմնադիրն Տր.

Հուլիւրը չէր վարանած ըսելու թէ Հայ է ինք, երբ Եանքի ըլլալուն պատիւն ու հպարտութիւնը չէր ամէցած փոխել խեղճ ու տառապող ցեղի մը անուան հետ, ուրու համար եկած էր գոհուիլ և իր լաւագոյն ծառայութիւնը մատուցանել:

Եփրատը ինք հղաւ, ու պահեց մինչեւ վերջ հայ ազգային հարապատութեան սկզբունքը, իր ծոցին մէջ կրթութեւոյ սերունդը հարազատ Հայու մը դաստիարակութեամբ ու զգացումներով հանրութեան զիրկը կը նետուի: Սաներն Եփրատի ազգային ճշմարիտ դաստիարակութեամբ ատկորուած, ազգին պահանջներուն յարմար ատաղձներով գործնական կեանքը կ'սկսէին: Եփրատ գոլէճը առողջ դաստիարակութիւնն ընծայող կրթավայր մըն էր: Բարոյակրթութեան ամենամաքուր զրօշմը կրած են միշտ իր գտնականներն ուր որ գացած են կրօնի ուսուցումը հոն կոյր և մօլիւանդ մտայնութեանց ոգին չէր կրեր երբէք: Եփրատացին կրօնասէր էր, ազատամիտ խոհուն և յարգանքի լաւագոյն վերաբերումը ունէր հանդէպ մայր եկեղեցիին ու Բրիստօնէական կրօնին, յարանուանական խտրութիւններու հաշիւները գոյութիւն չունէին անոր յարկին տակ: Իրիւս Բողոքական հաստատութիւնն մը որեւէ անհանգրտութիւն մը չէր պատճառեր այլ յարանուանութեան պատկան զաւակներուն: Հոն կրթուող ուսանող մը աւելի լուսաւորուած մտայնութեան տակ իր Մայր Եկեղեցւոյն կը վերադառնար:


Եփրատ Գոլէճ անունը յիշած ատեն, յուշիր ու գէմքեր կը տողանցուին մըտքիս մէջ: Կրթական Վաստակաւորներ, սիրելի ու յարգելի դաստիարակներ սէօօրերու սեւ բազմին զոհերը եղած, այրի թողուցին մայր Եփրատը: Հոգեհատոր զաւակը կորսնցնող մօր նման, սե սուղի մէջ է անոր ոգին:

Ո՞վ Եփրատի Սաներ, Եփրատը ըսեալ

լիքներ ունի անոնց որոնք չեն կրնար որեւէ ատեն մոռնալ անոր սիրելի յիշատակը: Անոր աւերակաց մէջ մեռելական լուսթիւն մը կը տիրէ, այրիացած սզաւոր մօր մը նման իր հեռաւոր զաւակներէն խաարիկներ կ'սպասէ: Բաժանման օրը Տաւ Կախուհն յետագարձ ակնարկ մը նետեցի Եփրատի շէնքերուն: Բարէ Գոլէճի երկու պատուհաններ, աւելոր մօր մը խոր ու ախոր աչքերուն նման, սպասումի յառած նայուածքի մը տպաւորութիւնը կուտար: Եփրատի ողին, ու հողիներն կրթական այն մըշակներու, որոնք երկար տարիներ տրքնեցան անվահեր, կը սաւառնին պաշտելի հաստատութեան վերեւ, անհամար իստ, թեւածող աղաւնիներու նման վերակենդանութեան վայր մը թառելու համար: Եթէ այդ հաստատութեան իտէալները յարութիւն չ'առնեն, եթէ անոնք օր մը կրթութեան բուրսատան մը պիտի չը մշակեն, անոր սաներն պիտի նմանին այն տպերախտ զաւակաց որ լըքած են իրենց այրիացած մայրիկը: Եթէ Խարբերդի քաւն ու հողը սիրելի է դու հոն ապրողին համար, եթէ նւթի ձեւերն յիշատակելի են պատճառը այն է թէ հոն փափաքներ, իտէալներ, սկզբունքներ մարմնացած էին ատենօք, եթէ կրթակրօնական վայրերը եղիմի տըպաւորութիւն մը կուտան, հոն ապրող հոգիներու, և բաղձանքներու մարմնացումներն են: Վերցուցէք ճշմարտութիւնը ու իտէալները, երեւութականը կը մեռնի:

Եփրատը չէ մեռած, կ'ապրի ան, անոր անունն ու յիշատակը տակաւին բազում սրտերու մէջ կը բտրախեն: Սաւայն Լճի և Խճի պիտի կանգնի այն կոթողը յաւերժացնելու համար անոր փառաւոր յիշատակը, որուն վրայ պիտի փայլի լոյսը խաւար մտքերու ու սրտերու համար:

Ա. ՏԷՐ ԶԱՉԱՐԵԱՆ



ՏՐ. ՊՐԻՄՔԻ

ՏՍՐՄԱՆԻ «Ս. ՊՕԴԱՍ ԴՈՒԼԵՃ»Ի
ՅՈՒՇԵՐԷՍ

Մեր ընտանիքին միւս անդամները
զուգահեռան կրթութիւն ստանալու հա-
մար մինչ ուրիշ հաստատութիւններ կը
յաճախէին, ինծի կը վիճակէր իմ բարձ-
րագոյն ուսումն ստանալ Ս. Պօղոսի
մէջ, ուր երկատար դպրոցի տարիներ
ընդունուի եւս։ Ասոր համար ես շնոր-
հակալ եմ։ Անկարելի է մէկիկ մէկիկ
պատմել այս ժամանակամիջոցին բոլոր
յուշերը։ Ճամբորդութեան գծուարու-
թիւնները, նախազահին և ուսուցիչնե-
րու հետ արդար կամ անարդար խիստ

վարմունքը, դասերու և քննութեանց
ընթացի վախերը, Տարսոնի ճահճատեղի-
քը, մանաւանդ Պր. Մանուչակեանի
զանգահարումը, որուն հնչիւնները
միշտ կը խանդարէին մեր տառօտեան
անուշ քունը, այնպիսի յիշատակներ
են, զորոնք կարելի չէ զիւրութեամբ
մոռացութեան մէջ թաղել։ Ներկայիս
բոլոր այդ գծուարութիւնները կատա-
կախառն հրճուանքով կը յիշենք, և մեր
զպրոցական բոլոր յիշատակները ուրա-
խութիւն կը պատճառեն մեզի։

Այսպիսի հաստատութիւններու մա-
տին ընդհանուր վերադարձութիւն մ'ընելու
և վճիռ մը տալու արտին հեղեղեալ կէ-

տերը պէտք է նկատի առնուին: Գու-
լէճի մը յաջողութիւնը շատ մը պայման-
ներէ կախում ունի, — բաւականաչափ
հիմնադրամ, կարող նախագահ և ու-
սուցչութիւն, յարմար մէկ միջավայր,
տեղին և ժամանակին յարմար ուսում-
նական ծրագիր և զազափարական, ա-
նոր աշակերտ հասցնող նախապատրաս-
տական դպրոցներու վիճակը, և այլն: Այսպիսի հաստատութիւններու մասին
խորհելու և արտայայտուելու առին
պէտք ենք նաև չմոռնալ անցեալի զբ-
ուարութիւնները, պէտք ենք անպայ-
ման նկատի առնել այդ առնեալն քա-
ղաքական գոյափոխակը և պայմանները:
Պէտք է խորհիլ նաև թէ կրթական մե-
թոտներու մէջ մեծ փոփոխութիւններ
յառաջ եկած են և մանկավարժութիւնը
յառաջգլխական մեծ քայլեր առած է:
Արդարութիւն չէ ներկայ մտայնու-
թեամբ անցեալը դատել. ապագան ալ
ճիշդ նոյն վճիռը պիտի տայ մեր մասին:

Նկատողութեան արժանի ուրիշ պա-
րագայ մը սա է թէ այսպիսի հիմնա-
րութիւնները, սխալ կամ չիտակ, մեր
մտաւորական և բարոյական կեանքը
սնուցանող և մեծցնող կեդրոններ եղած են:
Մեր այս մտաւորարոյական կեանքին
մայրը մասամբ մեր իսկ կամքովը կը
ընտրենք: Ուստի, պարտինք իրրեւ
հաւատարիմ զաւակներ յարգանքով և
սիրով յիշել զանոնք, երբ անոնց մասին
մեր գիտողութիւններն ու քննադատու-
թիւնները կը յայտնենք: Եթէ մայրի-
րը թերութիւններ և սխալներ իսկ ու-
նենան, զաւակներու համար մեծ պար-
տականութիւն մըն է զանոնք յարգել:

Վերոյիշեալ կէտերը մտքի մէջ պա-
հելով Ս. Պօղոս Գուլէճի մասին մեր ար-
պարտութիւնները կարճ կերպով կ'ու-
զենք պատմել:

1. Ս. Պօղոս Գուլէճ մեր մտաւորական
կրթավայրը ըլլալով հանգիւրձ, Հայ ե-
րիտասարդութեան համար տուն (home)

մը եղած էր, ուր բոլոր աշակերտները
ընտանեկան կեանքի մթնոլորտին մէջ
կ'ապրէին: Թէ նախագահը և իր ախ-
կները և թէ ուսուցչները աշակերտները
իրրեւ իրենց զաւակները կը սիրէին և
անոնց հետ այդպէս կը յարաբերէին:
Տը. Քրիսթի երբ «սիրելի զաւակներս»
ըսէր, իրապէս այդպէս կ'զգար և մենք
ալ այդպէս կ'զգայինք: Երբեք չենք
մոռնար մեր հիւանդութեան պարագա-
յին Տիկ. Քրիսթի իրրեւ մայր մեր
անկողիններուն այցելելը, մեր վէրքերը
կապելը, և բաժնուելու առնել ըլլայ
պղտիկ՝ նուէր մը մեր քովը ձգելը:

2. Մեր միտքերուն հորիզոնը ըն-
դարձակեց ան, գիտութեան զաները
բացաւ մեր աչքին առջև: Երբեմն ան-
հուն միջոցին մէջ ցրուած երկնային մար-
մինները դիտեցինք, իսկ երբեմն երկրիս
խաւերը, և երբեմն ալ անոր վրայ զբա-
նուող բոյսերը և թափառող կենդանինե-
րը ուսումնասիրեցինք: Պատմութեան
մէջ հին ազգերու և ցեղերու սովորու-
թիւնները ուրվեցանք. բարինելու և
չարերու, ոճրագործերու և փրկիչներու,
ազգաներու և իմաստասէրներու կեան-
քը ուսումնասիրեցինք և անոնցմէ հե-
տեութիւններ հանեցինք: Իսկ եր-
բեմն ալ մեր ակնարկները մենք միգի
ուղղելով մեր մտաւորական կարողու-
թիւնները ուսումնասիրութեան առար-
կայ ըրինք: Տարտնի Գուլէճը Աւետա-
րանի աւետմը բոլոր այս գիտութիւննե-
րէն վեր դասած էր, հոն ճշմարտ կը-
րօնքի և Աւետարանի շատ կարեւորու-
թիւն կը տրուէր: Յարանուանական
վէճերու երբեք առիթ չէր տրուէր. ա-
մէն եկեղեցիի հանդէպ «էր կը տաժ-
ուէր»: Այն աշակերտը որ բոլոր զասե-
րուն մէջ յառաջագէտ էր բայց Ս. Գիր-
քին ծանօթ չէր, ահա չունէր այդ հաւ-
տատութեան մէջ: Շատ լաւ կը յիշեմ
Տը. Քրիսթի սա խօսքը երիտասարդի
մը ուղղուած, որ բոլոր դասերէն ան-

ցած էր բայց Ս. Գրքի քննութիւնը չէր կրցած տալ. «Ջաւախ այս Գողէճը Աւետարանի վրայ հաստատուած է, Աւետարանը չսիրող և Ս. Գրքը սորվիլ չուզող երիտասարդ մը հոս գործ չունի: Բայց ամսոս որ Ս. Գրքի գասերը, որոնք Ս. Պօղոս Գողէճի ուսումնաւէան ծրագրին մէջ առաջնակարգ անդ կը բռնէին, սրբուած են այսօր:

Յ. Այս հաստատութիւնը կարօտներու և աղքատ աշակերտներու առջև իր դռները լայն բացած և միշտ անոնց ձեռքներու եղած է: Հայկական ջարդերէն վերջ որբացած բայց ուսումնասինջ երիտասարդներով լեցուած է ան, ուր թէ՛ մտաւարակէս և թէ՛ ֆիզիքապէս անոնք կը սնանէին: Տակաւին մեր մտքին մէջ են այն դժուարութիւնները, զորոնք կը կրէին աշակերտութիւնն ու ուսուցչութիւնը յարատե նոր դիմումներու մերժողական պատասխան չորուելուն պատճառաւ: Մենք այնպէս կ'ընդունինք թէ այս դժուարութիւնները իմաստութեան չգոյութենէն աւելի գոյթի արգիւնք էին:

Ժ. Հոն գիտական և կրօնական դասերու հետ շատ լուս և իրական կերպով ճշմարիտ ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը կը գրոշմուէին երիտասարդներուն մէջ: Մեր նախագահը իր երիտասարդութեանը ատեն զինուոր եղած, պատերազմի դաշտին վրայ վիրաւորուած էր: Հայասէր էր ան, Հայոց Պատմութիւնը ուսումնասիրած էր և մեր բոլոր վիշտերուն և տառապանքներուն անհեղձօրէն կարեկից գտնուած էր, ան աշխատած էր մեր արցունքները սրբել և աղօթած էր որ կեղեքիչներու լուծէն մենք ազատինք: Հոն ուսանող ամէն մէկ երիտասարդին սրտին մէջ խոր կերպով տպաւորուած էին ճշմարիտ ազգասիրութիւնը և անհատական ազատութեան զգացումը: Համբրոնի բերդը կատարած մեր այցելութեան տաթիւ մեղի

տեղեկութիւններ կուտար Ներսէս Համբրոնացիի կեանքէն:

Ծ. Հոն երիտասարդի մը յաջողութիւնը իր ջանքէն կախեալ էր: Երիտասարդին անպագան իր ջանքին հետ համեմատական էր: Ուսուցիչները մեղի կ'օգնէին, բայց դործին մեծ մասը ուսանողին կարողութեան և ջանքին թողնուած էր: Կարծա երիտասարդ մը քրական մէկ երկու ժամ պէտք էր անշխմալ: որ կարենար դպրոցին մէջ կարգալ: Ս. Պօղոսի ուսումնաւարտներէն շատեր, որոնք հիմա կարենոր զիրքերու տիրացած ին, իրենց ուսանողութեան շրջանին լամբա կը մաքրէին, խմոր կը չաղէին, վառելու համար փայտ կը կտրէին, և այլն:

Թ. Հոն ուսանողները ուրիշներուն օգնութեան հասնելու կը վարժուէին: Չէր սիրուեր այն երիտասարդը որ իր ցեղակիցներուն, աղքատներուն, կարօտներուն օգնել չէր ուզեր: Գիտեմ թէ մեր նախագահը յաճախ սեէ երիտասարդի մը մասին ուշիմ ածականը տալէ առաջ սապէս կ'արտայայտուէր. «Անձնազոհ երիտասարդ մըն է, պէտք ենք անոր օգնել»: Եւ մեղի ուղղած խրատներուն մէջ միշտ կ'ըսէր. «Զրի առիք և ձրի տուէք»: Աշակերտներու ընտրութեան մէջ միշտ կը ջանար որ ամէն մէկ զիւղէն կամ քաղաքէն Գողէճի մէջ երիտասարդներ գտնուին և անոնց սապէս կ'ըսէր. «Մենք քեզ պիտի դաստիարակենք, բայց դուն ալ պիտի երթաս քու հայրենիքիդ մէջ ծառայելու»:

Կ'ուզեմ օրինակով մը գիտողութիւններս վերջացնել: Մեծ պատերազմի միջոցին Ս. Պօղոս Գողէճի ուսումնաւարտներէն մէկը Սե Ծովի մօտ Թրքական բանակին բանւորական վաշտերուն մէջ կը ծառայէր, ուր իր կարողութեանը շնորհիւ ընդհանուր քարտուղարի օգնականը կըլլայ: Ամիսներ ևս քը կեսարիայէն կարգ մը Յոյն և Հայ երիտասարդներ ձերբակալուելով այս վաշտին կ'առաք-

ուրին: Տրուած հրամանի մը վրայ նախ-
կին ուսումնասիրող նորեկները արձա-
նադրելու կուգայ: Արձանագլութեան
միջոցին կը հասկնայ որ Յոյներէն մէկը
Ս. Պօղոսի ուսանողներէն է: Անմիջա-
պէս պէտք եղած օգնութիւնը կը կա-

տարէ, այս հիւանդացած թշուառ Յոյն ե-
րի օստարղը տաքուկ տեղ մը կը հանգ-
չեցնէ: Յոյն երիտասարդին առաջին
խօսքը կըլլայ. «Կեցցէ՛, Ս. Պօղոս Գո-
լէճը»:

(ՏՕՔԹ.) ՖԻԼԻՊ ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԳՈԼԷՃ


Ներկայ Հալէպի Գոլէճը Սյնթապի մէջ
հաստատուած նախկին Կ. Թ. Գոլէճի
գաւալը, անոր ժառանգորդը և շարու-
նակութիւնը կը նկատուի: Այսպէս նը-
կատուելուն համար ալ բաւական պատ-
ճառներ կան: Անոր յարկի նախա-
պահը նոյն անձն է. նախկին ուսուցիչ-
ներէն մէկը տակաւին պաշտօնի վրայ է,
ուսանողութեան մեծագոյն մասը տա-
կաւին միեւնոյն շրջանին՝ Կիլիկիոյ կը
պատկանին: Կազմակերպական տեսակէ-
տէն ալ նայելով գրեթէ փոփոխութիւն
չէ կատարուած. այս Գոլէճն ալ նախոր-
դին նման Կիլիկիոյ Հայ Աւետ. Միու-

թեան կողմանէ լնարուած վարչական
փոփոխի մը եւ Ամերիկա գանուղ ինա-
մակալ Մարմնի մը կողմանէ կը կառա-
վարուի: Ծախքին կարեւոր մասը տա-
կաւին Կ. Թ. Գոլէճի հիմնադրամին տա-
կուէն հայթայթուած գրամով կը գոցուի:
Ներկայ Գոլէճին նպատակին եւ նշանա-
կէտին մէջ ալ նախկին սկզբունքը տի-
րող է, որն է առանց ցեղային և յարան-
ուանական խտրութեան երկրին ուսեալ,
կարող, քրիստոնէական բարձր նկարագ-
րով առաջնորդներ պատրաստել:

Այսու հանգերձ պէտք չէ մոռնանք որ
նախկին Գոլէճը որչափ ալ սիրելի եւ



Կ. Թ. ԳՈԼԷՃԻ ԳԼԽԱԻՈՐ ՇԷՆՔԸ, ԱՅՆԹԱՊ




ՏՐ. Թ. ԹՐՕՊՐԻՃ

Հիմնադիր և Ա. Նախագահ Կ. Թ. Գոլենի

ջարգելի եղած ըլլալ, Ներկայ Գոլենը շատ մը կողմիցով չի կրնար նախկինին կատարեալ մէկ յաջորդը ըլլալ, բնական կերպով այդպէս չի կրնար ըլլալ, և թեւրեւս պէտք չէ որ ալ ըլլայ: Ներկայ հաստատութիւնը շատ մը տեսակէտներով նոր Գոլեն մըն է: Տեղն ու միջավայրը նոր է: Նախկինը Այնթապի մէջ էր, իսկ ներկայինը՝ Հալէպի մէջ: Այն-

թապ մօտաւորապէս 70000է բաղկացեալ բնակչութիւն մ'ունէր, որուն մէկ երրորդէն աւելին Հայեր՝ իսկ մնացածը ամբողջութեամբ Թուրքեր էին: Այնթապի բնակչութիւնը փոքր հարստութեան տէր էր, անոր կեանքը պարզ, ընկերական յարաբերութիւնները նախնական, մոլորութիւնը, մանաւանդ քրիստոնեայ մասը կրօնատէր, չափազանց ուսումնասէր,



ՓՐՈՖ. Ա. Յ. ՊԵՋՃԻԱՆ 1837—1913

Հիմնադիր և ցման փրոֆ. բնական գիտություն

Քաղաքակիրթ կոչուած կեանքին շատ մը աւելորդ հոգերէն և փորձանքներէն ու աղէտներէն ազատ էր։ Այնթապ առողջարար ջուրով և օդով օժտուած, արտաքին աշխարհի հետ սահմանափակ յարաբերութեամբ, տեսակ մը մենութեան խաղաղ ծոցը ամփոփուած քաղաք մըն էր։

Իսկ Հալէպ 350000 հոգիէ բաղկացած բաղմաքեղ և բազմադաւան բնակչու-

թեամբ, Անաթօլուի և Սուրիոյ ճիշդ չիման կէտին վրայ էն կարեոր վաճառաւոր կեդրոն մըն է, ուր Հայութեան մեծագոյն մասը թշուառ գաղթականներէ կը բաղկանայ։ Բնիկ ժողովուրդին մէջ մեծ հարուստներ, կալուածատէրներ կան։ Հալէպ գրեթէ բոլոր աշխարհի հետ յարաբերութիւն ունեցող առողջ օդով արարական քաղաք մըն է, որուն ժողովուրդը իր ժամանակը աւելի դրամ




ՏՐ. ՖՈՒԼԸՐ Բ. ՆԱԽԱԳԱՆԵՐ Կ. Թ. ԳՈՂԵՃԻ

չինչիւ յատկացուցած է քան թէ դպրոցի, Եւրոպական մշակոյթի ներքինէն աւելի արտաքինը ընդօրինակած է։ Ահա այս նոր Գոլէճը այս նոր քաղաքին մէջ յառաջ կու գայ, ուսանողական և ուսուցչական մարմինները այլապան ցեղերէ և կրօններէ կազմուած են։ Ընկերային, կրօնական, տնտեսական միջավայրը Այնթապինէն բոլորովին կը տարբերի։ Նոր կրթավայր մը, նոր պետութիւն մը։ Այնթապի մէջ Թրքական կառավարութիւնը կար. և Գոլէճը ալ աւելի Համիտական կառավարութեան շրջանին ծագում առած և զարգացած էր։ Իսկ Հալէպի մէջ Սիրո-ժորանսական կառավարութիւն մը կայ, ամէն տեսակ ազատութեամբ, առանձնաշնորհումներովը, մրցակցութիւններովը, տնտեսական գիւլութիւններովը ու դժուարութիւններովը, քաղաքական ազատութեամբ ու մեծ կարելիութիւնովը նոր կառավարու-

թիւն մը, քաղաքական նոր կիանք մը կայ։ Նոր կազմուած կամ իր կազմութեան շրջանին մէջ գտնուող նոր պետութեան մը տակ ապրող նոր Գոլէճ մը։

Ուսուցչական կազմը նոր։ Փրօֆէսոր Ալեքսան Պէլճեան, Ս. Լեւոնեան, Ն. Պալեօղեան, Ճ. Մաթոսեան, Լ. Պապիկեան ոչ ևս են։ Փափազեան, Լ. Լեւոնեան, Զ. Պէլճեան, Կ. Տաղլեան ուրիշ տեղեր ցրուած են։ Բացի Տր. Մէրիլէ և Մաթոսեանէ ուսուցչական մարմինը գրեթէ նոր անդամներէ կազմուած է։

Ներկայ Գոլէճի շէնքերն ալ նախկինները չեն։ Այնթապի մէջ «Զազալ թէփէ»ի վրայ կառուցուած Կ. Թ. Գոլէճի շէնքերը, որուն աննման օդն ու ջուրը, մարդագաշտն ու ճեմավայրը, գեղեցիկ տեսարանը անմոռանալի են բոլոր զանոնք ճանչցողներուն համար, ներկայիս թերեւս շնագայլերու յաճախավայրը դարձած են։ Նոր Գոլէճը ամփոփուած



ՓՐՈՖ. Յ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հոգեբանութեան եւ փիլիսոփայութեան փրոֆ. Կ. Թ. Գրիգորի

է նեղ, անբաւարար կահաւորումով քանի մը շէնքերու մէջ։ Ապագայ գոլէճական շէնքերու համար ընդարձակ գետին մը ծախու առնուած է միայն։ Այս առթիւ դէպք մը կը մտաբերեմ։ Եթէ չեմ սխալիր 1873—74 ին էր, մենք՝ ապագայ Գոլէճի աշակերաներս, թուով 8—10 երիտասարդներ, Այնթապի Գոլէճին բլուրը պտոյտի ելած էինք։ Աշա-

կերտներէն մէկը ձիու պայտ մը գտաւ։ «Պայտ մը ունինք, ձի մը եւ երեք պայտ կը պակսին մեզի», պոռաց աշակերտներէն մէկը։ «Հաճի թաա էֆէնտի այս բլուրը նուիրած է, վրան գոլէճի շէնք մը շինուելու համար։ մենք ալ գետինը դրտանք եւ մեզի կը պակսին շէնք մը եւ գոլէճ մը», դիտել տուաւ ու խնդաց ուրիշ մը։ Մի քանի տարիներ չանցած



ՓՐՈՖ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

Կենսաբանական եւ ուսողական գիտութեանց

կարելի եղաւ ձի մը եւ երեք պայտ պտնել. և Կ. Թ. Գոլէճի հոյակապ հաստատութիւնը յառաջ եկաւ. Ինչո՞ւ ներկայիս ալ, մի քանի տարիներ ետքը, նոր գետնի վրայ նախկինէն աւելի գեղատեսիլ և փառաւոր գոլէճ մը յառաջ չգայ:

Գոլէճը նոր մէկն է, հինը չէ. քանզի ժամանակը նոր է: 1929՝ 1914 չէ. երկուքին մէջտեղի տարբերութիւնը 15 տարուան երեւութական տարբերութիւնը չէ, այլ դարի մը թերեւս մի քանի դարերու տարբերութիւնն է: Չեմ գիտեր պատմութեան որ մէկ դարուն

մէջ քաղաքական, տնտեսական, գիտական, արհեստական և ընկերային զանազան մարզերուն մէջ այնքան յեղաշրջումներ, փոփոխութիւններ, յառաջգիմութիւններ և թերեւս ստորնացումներ տեղի ունեցած են, որքան որ պատահած են սա վերջին 15 տարիներու միջոցին: 1914ը հին դար է, իսկ 1929ը նոր դար է:

Այս հաստատութիւնը որ մինչև 1914ը չարունակեց, հին Գոլէճ էր: Քաղաքը հին, միջավայրը հին էր. հին ուսուցիչներ, հին յոյսեր, մասամբ հին մտայնութիւն, և հին հաւատք անոր բաղ-

կացուցիչ տարրերն էին: Կ. Թ. Գոլէճ հակառակ իր կարգ մը սահմանափակումներուն և թերութիւններուն, իր ժամանակին շատ մեծ ծառայութիւններ մատուց, որոնք օրէ օր աւելի լաւ կը գնահատուին: Նոր Հալէպի Գոլէճը, իրը նախկինին մէկ հոգեզաւակը, անկէ սորվելիք շատ դասեր, անոր հետեւողութեամբ կատարելիք շատ բաներ ունի: Պէտք չէ մոռնանք միայն թէ Հալէպի Գոլէճն ալ իրեն յատուկ կոչումը, մասնաւոր ծառայութիւնը, սեպհական փափաքը, յոյսն ու հաւատքը ունի: Այսօրուան Գոլէճի մեծագոյն գործն է գտնել իր այս կոչումը, նոր կեանքը, նոր յայտը, գայն գիտնալ ու սիրել և ապա իրագործել ջանալ: Անոր մեծագոյն գործն է ներկայ դարուն գիտական, քաղաքական, բնկերային, կրօնական լարելիքներին մէջէն իր բարձր նշանակեալը գտնել և գէպի հոն ձգել: Եւ ինչ նշանակեալն է մարդ ըլլալ, ճշմարիտ մարդ ըլլալ: Եւ այս ամէնէն աւելի կարելի է հետեւելով Որդւոյն Մարդոյ: Պէյուք

Զ. Ա. ՊէճճեԱն

ՀՈԿՏԵՄԲԵՐ 11

Կարեւոր թուական մըն է 1876 Հոկ. 11ը, որ իւրարմէ կը դառնէ Կիլիկիոյ կեանքին երկու շրջանները—1876 է առջի կեանքը և 1876 էն մինչև 1915 տեւող կեանքի շրջանը: Այդ թուականին էր որ Այնթապի նորահաստատ Կ. Թ. Գոլէճը իր առաջին Փրէշմէն կարգը կ'ընդունէր, և Գոլէճին հիմնարկումը պաշտօնապէս կը հռչակէր: Այդ առիթէն ի վեր այդ թուականը ածնելի օր մը եղած է Գոլէճին համար: Կ. Թ. Գոլէճ իր քառասնամեայ պատմութեան մէջ կեանքը յիշաշրջող և վերացնող ազդակ մը եղած է անոր բոլոր մարգերուն մէջ: Հոկ. 11ը, ահա այն օրն է, երբ կ'արժէ որ հիմնադիրներու անխոնջ և անձնուէր

ջանքերուն և հաստատութեան կատարած թանկագին ծառայութիւններուն վերջիշումը կատարուի գնահատական և երախտագրական ջերմ գգացումներով: Մեծ Պատերազմի ահալ փոթորիկը և Հայ կեանքին նաւարկումը պահ մը մշտնջենական վախճանի մը հասցնել թուեցաւ Կ. Թ. Գոլէճի գործունէութիւնը, որ սակայն այսօր հիւրընկալ հորիզոնի մը տակ կը վերակենդանայ «Հալէպի Գոլէճ» ի հաստատութեամբը:

Այս տնտրուան Հոկ. 11ը նշանակելի թուական մը պիտի կազմէ Գոլէճի պատմութեան մէջ: Այն օրը առաւօտուն նախապատրաստական կարգերը, Հայ Աթուլի աշակերտութիւնը և Գոլէճի երկու կարգերը և ուսուցչական մարմնի ամբողջական կազմը Հայ Աթուլի բակին մէջ հաւաքուեցան, ուր Տր. Ճ. Մէրիլ ներշնչիչ պատգամ մը տուաւ. բոլոր ունկնդիրները խորապէս ազդուած էին դադափարապաշտ մտքին գործնական և օգտապաշտ թելադրութիւններովը:

Նոյն օրը իրիկուան ժամը 4.30 ին բոլոր ուսանողութիւնը, Կ. Թ. Գոլէճի Հալէպարնակ ուսումնաւարտները հրաւիրուած էին Հալէպի Գոլէճի նոր գընուած ընդարձակ գետինը, մասնակցելու պաշտօնական և պատմական արարողութեան մը: Ապաղայ Գոլէճի գետինը կը գտնուի Հալէպի հիւսիսը, նորահաստատ հայկական թաղամասին մօտ: Կարճ բայց յուզիչ պաշտօն մը կատարուեցաւ: Որոշեալ տեղի մը շուրջ հաւաքուեցան բոլորը. Տր. Մէրիլի մի քանի կարճ խօսքերէն վերջ Գոլէճի վարչական ժողովի անդամները հաւաքաբար կարդացին թուղթ մը, որով կը յայտնէին գետինն նուիրագործումը իրր Հալէպի Գոլէճի գետինը, ապա ազօթեց Վեր. Կ. Յ. Յարութիւնեան: Ասոր յաջորդեց յուզիչ տեսարան մը, Տր. Մէրիլ ձեռքը բրիչ մը առնելով դրաւ այն տեղը, ուր ապագային պիտի փորուի Գո-

լէճի ջրհորը: Բրիչը յանձնելով Միսիս
է. Մէրիլի, դուստրը Տր. Թրօպրիճի, և
Տիկ. Տոքթ. Գալֆահանի, դուստրը
Փրօֆ. Ա. Յ. Պէզնեանի, ըսաւ. «Առա-
ջին հարուածը մեզ պիտի կապէ անց-
եալին, քանզի առաջին հարուածները
պիտի տրուին հիմնադրներու զաւակ-
ներուն կողմէ:» Ասոր կարգով յաջոր-
գեցին Վարչական Ժողովի անդամներուն,

ուսումնաւարտներուն և ուսանողներուն
կողմէ տրուած հարուածները: Սու-
րիոյ Վաքսանի կուսակցութեան պետիքէն
Տօքթ. Լև. Գէյալի և սմանակցեցաւ այս
արարողութեան:

Ներկաները բաժնուեցան խորապէս
ներշնչուած երբ արեւի վերջին ճաճանչ-
ները իրենց հոսկ ողջոյնը կուտային
շրջակայ բլուրներուն: **ՆԵՐԿԱՅ ՄԸ**

ՀԱՄԼԵՐԻ ԳՈՒՂՔԻՆ ԳԼՏԻՆ



ՏՐ. ՄԵՐԻՐԻԼ ԿԸ ԽՈՍԻ ԶՈՒՏ. ԼԻԻՆ

ՀԱՅ ՍՈՍՈՒԼԻ ՇԷՆՔԸ ՀԱՄԼԵՐ ՍԻՐ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ



ՀԱՄԼԵՐԻ ԳՈՒՂՔԻՆ ԶՐԵՄԻՆ ԵՒ ՍՈՑ. ԿԱՐԳԵՐԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

Ս. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՊԱՐԹԵՒ 2

Ս. Գրիգոր Լուսաւորչի շրջանին ուսումնասիրութեան առթիւ, այս էջերուն մէջ տեսանք Գ. դարու վերջին և Դ. դարու առաջին քառեակներու դէպքերն ու դէմքերը: Յաջորդութիւնով մը ժառանգական՝ որ բոլոր նուիրապետական հաստատութեանց անյեղի օրէնքն էր, Ս. Գրիգորի յաջորդեց իր զաւակը Արիստակէս: Արիստակէս՝ Լուսաւորչի երկրորդ զաւակն էր, Վրթանէս լինելով անդրանիկը: Յաջորդութեան կարգը ցատկելու այս պարագան զանազան մեկնութիւններու տեղի տուած է, բայց մենք զանց կ'առնենք յիշել զանոնք, երկարաբանութենէ խուսափելու համար: Ըսենք այժմէն միայն որ, Արիստակէսի ալ կը յաջորդէ իր երէց եղբայրը Վրթանէս: Դ. դարու առաջին քառորդին լրման տարին Լուսաւորիչ արդէն վախճանած էր, բայց Արիստակէս իր հօր չունչին տակ արդէն 306 էն սկսեալ մեծցած էր քրիստոնէական բուռն եռանդի և հզօր հաւատքի մը շնորհներով: Իր աղօթատէր և մաքրակենցաղ հայրը՝ յաճախ լեռները կը քաջութիւն արդէն և ճշմանաւորական կեանք մը կ'ապրէր, այնպէս որ Արիստակէս կանուխէն ստիպուած էր թէ հոգեւոր և թէ կազմակերպչական ծանր գործերու լծուիլ և Աստուծոյ օգնութեամբ փորձ եւ հաւատաւոր Հայրապետի մը առաքինութիւնները իւրացնել: Իր հօր նման՝ հաստատեց հաւատքի կանոններ, բարեկարգչական ուղղութիւններ և ժամանակի պահանջներուն համաձայն ծէսեր որոնք անշուշտ յունարէն կը գրուէին:

Արիստակէս պատմական անուն մըն ալ չհանցաւ, մասնակցելով Նիկիոյ Ժողովին, ուր բանաձեւուեցաւ «Հաւատոյ Հանգանակ»ը, զոր Հայ Սկիզբիցին կը գործածէ

ցարդ, որն է «Հաւատամքի մի Աստուած»ը, հոգեւունչ դաւանաբանութիւն մը: Քրիստոնէական հաւատքի էական կէտերը պարունակող այս հանգանակին վրայ, Ս. Գրիգոր աւելցուցած է քանի մը տողնոց վաւերացման դիր մը, որ կ'սկսի «Իսկ մենք փառաւորեսցուք...» աղօթքով, զոր՝ ամէն անգամ որ «Հաւատամք»ը կրկնուի, կը կարգայ կամ կը խօսի պաշտօն կատարող քահանան: Արիստակէսի Նիկիոյ Ժողովէն դարձէն վերջ, Լուսաւորիչ Վաղարշապատի մէջ Ժողով մը գումարեց և «Հանգանակը» վաւերացնող իր կնիքն ալ, այսինքն «Իսկ մենք փառաւորեսցուք»ը արտասանելէն զատ, պաշտօնապէս ալ կաթողիկոս հռչակեց Ս. Արիստակէսը, որ ինչպէս տեսանք արդէն վաղուց ընտելացած և ջանքեր թափած էր այդ մարզին մէջ:

Արիստակէս՝ Նիկիոյ Ժողովէն բերաւ նաեւ կարգ մը բարեկարգչական կանոններ, որոնք օրէնքներ էին՝ եկեղեցականներու պաշտօնները և իրաւասութիւնները ճշգրտ, մեղքերու և ապաշխարութեան հանգամանքները որոշող և ճշմարիտ քրիստոնէի կեանքն ու կենցաղը սահմանող: Այս կանոններուն վրայ Ս. Գրիգոր 30 կանոններ ալ ինքը աւելցուց և վաւերացուց զանոնք Վաղարշապատի յիշեալ գումարման մէջ:

Արիստակէսի անհատական կեանքն ալ լի է յոյժ օգտակար թելադրութիւններով: Ծնած 264 ին, իր հօր Կեսարիայէ մեկնելէն վերջ իր մօր քով մնացած եւ անոր հետ վանք մտած էր: (Յիշել որ Ս. Գրիգոր եւ Մարիամ, իր կինը, յօժարակամ հրաժարած էին ամուսնական կեանքէ եւ բաժնուած): Արիստակէս վանքի մենակեացի կեանքը ապրեցաւ մինչեւ 15 տարեկան հասակը, աշակերտելով Նիկոմաքոս անուն ճգնաւոր մօնազի մը: Աշակերտական շրջան մը բոլորելէ վերջ սկսաւ ճգնաւոր

րական կեանք մը ապրիլ: Երբեմն ալ ուսուցչական պաշտօն կատարելով: Այս շրջանին էր որ Տրդատ թագաւորի հրաւերին վրայ գփուարաւ համոզեցին զինքը Հայաստան երթալ, ուր հազաւ կղերականի սքեմը:

Ամենայնապէս իր ծրարեցողութիւնը: Արիստակէս կը խորհէր փառաւորութիւն, ցուցամուրթիւն, աւելորդ շուքերէ, փայլերէ և թափօրներէ: Ինչո՞ւ օրինակ չըլլայ այս Սուրբ փառաւորութիւն տենչէն տառապող արդի սքեմաւորներուն: Կ'աւանդուի թէ՛ Նիկիոյ ժողովի օրերուն, քաղաքին շրջակայքը պտըտելու ատեն, տեղացիք սկսան Արիստակէսը ծաղրել, իր անշուք, համեստ և առաքելական երևոյթիւն և արտաքինին համար և մշակ կօչեցին զայն: Սակայն իր այսքան համբաւաւոր պարզութիւնը պատճառ մը չեղաւ որ Նիկիոյ ժողովին մէջ զլացուի անոր՝ այն արժանաւժայեւ յարգանքը որ իրաւունքն էր Լուսաւորչի սիրունդէն եկած Հայ եպիսկոպոսի մը:

Արիստակէս անապառ եղած է բառին խոտազոյն առոււմով: Պարզակեաց և անպաճօն հողի մը բնական է որ ճշմարտութիւնէն և արդարութիւնէն պիտի չկրնար չեղիլ: Եւ այդպէս էր պարտադան Ս. Արիստակէսի համար: Ծշմարտութիւնը խօսելու, քննադատելու և արդարութիւնը պաշտպանելու ատեն այն երբեք նկատուեմ, վախ, համակրութիւն, կամ կիրք խառնած չէ: Իր Մեծ Ղարաբաղի նման, «Այոն այո՛ և ոչն ո՛չ» եղած է իր սկզբունքը: Կը հաւատարմի որ իր շրջանին մեծ գփուարութիւն կը կրէր Արիստակէս, Հայ աւագանին, իշխաններն ու արքունիքը մէկ օրէն միւսը չէին կրցած թօթափել հիթանոսական սովորութեանն, որոնց զէմ անդիմադրելի կորովով, անթեքելի հաստատամտութեամբ և անսպասելի անուշադուրթեամբ կը պայքարէր այն:

Մանուկ հասակէն ճգնաւորական խնտարեր և ամուրի կեանք մը բոլորած, սկզբունքի տէր, համոզման մէջ անխախտ եկեղեցական մը, որպիսին էր Ս. Արիստակէս, չէր կրնար անշուշտ հանդուրժել քրիստոնէական կեանքի հանգէպ ժողովուրդին մէջ տակաւին ծուարած այդ անտարբերութեանց: «Քու տանդ նախանձը զիս կերաւ»: Ինչպէ՞ս՝ ա՛յդ բարի նախանձը, ա՛յդ սրբազան հուրը պատճառ եղաւ որ Արիստակէս զոհուի, իր Քրիստոսին քան մը ջգոհեղուն համար: Թէ ի՞նչպէս. երկու խօսքով ըսենք և փակենք: Մոփայ գաւառի բզեշխը—կառավարիչը—Արքեպիսկոպոս ծանր կշտամբանքի մը յանդիմանութեան մը ենթարկուեցաւ Ս. Արիստակէսի կողմէն, իր մէկ յօտի ընթացքին համար, աւանդողներ կանոնաւոր Արիստակէս բանադրեց, անիծեց Արքեպիսկոպոս և այս վերջինը բուն կերպով զայրացած սպաննեց Սուրբը, «Պատահաւ ի ճանապարհ» ի, ինչպէ՞ս կը հաւատաւ պատմահայր Մ. Խորենացի: Այսպէս կը վերջանայ օրինակելի Սուրբի մը կեանքը 333 թուականին հոգիւ 7-8 տարուայ Հայրապետական աթոռակալութեան մը վերջ, 70 տարեկան հասակին: Մողթինք սր իր կեանքը շատերուն ներշնչման աղբիւր մը դառնայ: Հայկ

ՌԵՏՈՐՆԻ

ՄԵԾ ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽՈՐՀԻՆ ԵՒ ԿԸ ԳՈՐԾԵՆ

Մը. Ուսուցչարթ որ երկար տուն կարեւոր մարդերու իբր խորհրդական փորձառութիւն ունեցած է և տառնեակներով մեծ մարդոց հետ յարաբերութիւն բնած է, հասարակաց հինգ զիծեր զլտած է մեծութիւնը յատկանշող.—

1. Ծղօրէն զիտել
2. Ողջամտօրէն դատել
3. Համարձակ և անկեղծ արտայայտութիւն
4. Եռանդ
5. Հաւատք

ԴԱՐԻՆ ԴԱՆԻԷԼ

Ամառնային վազանցի օրեր են :

Հգօր է Հելվետեան հիանալի տեսարաններու հրապոյրը . և զքօտաշրջիկները աշխարհիս ամէն կողմերէն՝ սկսած են արդէն հաւաքուիլ հօտ : Անվերջ հօտանքը հոգեկան կազդուրում փնտոտղներուն :

Եւ ալ միայնակս՝ հեռացած քաղաքներու խաժամուժ խռնութենէն և ընկերային կենցաղի պարտազրեալ արարողութիւններէն՝ կը շրջիմ սարէ սար : Բնութիւնը կը դառնայ միակ մտերիմս . սրիշ բան չեմ փնտռեր , չեմ նկատեր :

Այլ սակայն , ժիւրա լեռներու վրայէն կ'անցնիմ , բնական գեղեցկութիւններու քով ուշադրութիւնս կը զբաւենն սե լեռան կոպերու երկայնքին հանգիստ հանգարտ տարածուած շարք շարք գիւղերու քարգաւաճ վիճակը , բնակիչներուն բարեկեցիկ կենցաղը : Հետաքրքրութիւնս զոհոցնեւու համար կը պատասխանեն ինձի՝ թէ այդ վայրերու ժողովուրդը իր կեանքի ճոխութիւնն ու հանգիստը կը պարտի ժամագործութեան : Կը հասկնամ . . . ս'վ չէ լսած հուշակը զուիցերիական ժամացոյցներու : Հոս 50,000 գործաւորներ ժամագործութեամբ կ'զբաղին և տարեկան 60,000,000 տուար արժողութեամբ արծաթ ու ոսկի ժամացոյց կ'արտաձեն : Նախանձելի՝ ճարտարարուեստ՝ Հայտատանի հազիւ երկու երրորդ մեծութիւնը ունեցող աստնի փոքրիկ երկրիմը համար :

Հետաքրքրութիւնս հօտ չի մարիլ , սակայն : Կը մոռնամ զքօտաշրջիկի հանգամանքս , կը հարցնեմ , կը փնտռեմ , և ահա գիւղի վարժապետի բերնէն կը քաղեմ Զուիցերիոյ ժամագործութեան սկզբնաւորութեանը մասին հետեւեալ գեղեցիկ ու միանգամայն հրահանգիչ պատմութիւնը :

1678 ին էր երբ Մօսիէօ Բիէր ձիւրու հարուստ վաճառականը՝ Անդլիայէն դէ-

պի հայրենիք վերադարձին իր հետը բաւաւ առաջին ժամացոյցը զոր Զուիցերիան երբէք տեսած ըլլար : Սա՝ կոշտ ու ագեղ , ծանր ու հաստ գործիք մըն էր , որ մի քանի կլորիկ անւիկներ միայն ունէր , մէկ հատիկ սլաք՝ ան ալ թիթեղէ , իսկ ուժանակը աղիքէ լար մըն էր : «Ժամացոյց» կոչուելիք բան չէր . բայց , վերջապէս , «կը բաւէր» :

Տասնութերորդ դարու այս նորութիւնը ամենազաւ հետաքրքրութիւնը արթնցուց զիւզացիներուն մէջ : Շատեր երկար ճամբայ կը քալէին զայն տեսնելու սիրոյն : Սմանք ալ չէին կրնար զայն բանալու փորձութեան զիմադրիլ : Իսկ աւելի յանդուգն եղողները անոր անւիկները կը խառնէին և զործողութիւնը կը քննէին , ա՛յն աստիճան որ՝ օր մըն ալ , ի մեծ տխրութիւն անոր տիրոջ , ժամացոյցը «աւրուեցաւ» : Բնամոռէն կանգ առաւ ան : Շարժում չփռւմ , իւզ , երեքու մ'օգուտ չըբաւ :

Մօտակայ գիւղերէն մէկու մը մէջ՝ ի Պրիսէլ՝ կը գործէր երկտասարդ դարբին մը , Դանիէլ Ժանրիշար , իր հօրը աշխատանոցին մէջ : «Եթէ օք կարող է զայն նորոգել , Դանիէլ է այդ» : Այս եղաւ ամէնուն վկայութիւնը :

Իբաւ ալ պատահին Դանիէլ անուն հանած էր իւրեւ ինքնատիպ հնարամիտ մը : Ան պղտիկուց արդէն սկսած էր զմեղիով և կամ , երբոր պատեհութիւնը գտնէր , իր հօրը խանութին կոշտ գործիքներովը տախտակէ , թիթեղէ ու երկաթէ նուրբ աւարկաներ շինել՝ ընդօրինակութեամբ , իսկ երբեմն ալ իր՝ իսկ մտքի յղացումներուն տուով աւարկայական ձեւեր :

Ձիւրու վաճառականը ուղղուեցաւ դէպի Դանիէլի գորբնոցը , և պարգեց իր պէտքը : Պատանին՝ աւրուած գործիքը վարժ աչքով մը քննելէ վերջ անմիջապէս ըմբռնեց անոր գործողութեան ոճը և աւրուելուն պատճառը :

Արդ՝ առանց վարանումի խոստացաւ
զայն նորոգել:

Դանիէլի այս արկածախնդրական ու-
րոշումին վրայ՝ ծերունի հայրը, որ մին-
չեւ այդ հետաքրքրութեամբ կը գիտէր,
սաստիկ կշտամբեց զայն՝ իր չգիտցած
գործին խառնուելու յանդգնութեանը
համար: Իր առարկութիւնները եզրա-
կացուց ան. «Փոխանակ նորոգելու, բո-
ւորովին պիտի աւրես զայն. և այդ պա-
րագային ուրկէ՞ պիտի կարենանք վը-
ճարել թանկագին այդ առարկային ար-
ժէկինը:» Եւ հուսկ ուրիմի՝ Դանիէլի
վստահ ու հանդարտ պնդումին վրայ՝
բարկութեամբ իր ձեռքի մօլորճովը զար-
կաւ սալին, և յայտարարեց թէ ինք
բացարձակապէս զիրձ կը մնար ուէ պա-
տասխանատուութենէ:

Մօսիէօ Բիէն իր ժամացոյցովը կը
հեռանար գլխիկալս: Բայց ինքնավս-
տահ պատանին զիւրաւ յուսալքով
չէր գիտեր: Վազեց ձիաւորին ետեւէն
համոզեց զայն, և առաւ ժամացոյցը
ձեռքէն: Աշխատեցաւ, և յաջողեցաւ
զարմանքի մատնելով իր թերազատան
հայրը և գոհունակութեան վերածելով
վաճառականին մտահոգութիւնը:

Բայց Դանիէլ չգոհացաւ միայն աւ-
րուածը նորոգելով: Ան իր միտքը յոգ-
նեցուց՝ իր տեսածին նմանը չինելու
կարելիութիւններովը: Հայրը իրեն յոր-
դոր կուտար ետ կենալ ատանկ անհնա-
ւին բանի մը վրայ խորհելէ. բայց տը-
զուն երեւակայութիւնը ըռնկած էր ար-
դէն իր խանդին հետ: Իրեն համար
միակ հարցն էր՝ թէ ուրկէ պիտի կարե-
նար գտնել ժամացոյցի մը նուրբ միջե-
նաները ձեւելիք գործիքները: Խորհե-
ցաւ հաշուեց և եզրակացուց ան. «Ես իմ
ձեռքովս կը պատրաստեմ զանոնք»:

Ամբողջ տարի մը աշխատեցաւ նախ
իր յարմար դատած գործիքները չինե-
լու, միշտ գոհելով իր հանգստի ժամե-
րէն որպէսզի իր հօրը բարկութեան

պատճառ չտայ՝ թէ ինք պարապ տեղ
ժամանակ կը վատնէր: Յետոյ այդ գոր-
ծիքներով վեց ամիս եւս աշխատեցաւ,
և ահա իր հօրը կը ներկայացնէր իր աշ-
խատութեան թանկ արդիւնքը՝ իր ա-
ռաջին ժամացոյցը: Դանիէլի ժամա-
ցոյցը աւելի ճշգրտահ հաւաքան վա-
ճառականներ:

Ա՛լ զարբիւր ժամացորձ զարձած էր:
Սա պատահեցաւ 1661 ին Նէօշաթէլի
մէջ:

Դանիէլ չգոհացաւ՝ զարձեալ՝ միշտ
նմանը պատրաստելով: Տարուէ տարի
յոկեց, յեղաշրջեց ու կատարելագործեց
իր նոր արհեստը: Նորանոր գործիքներ
հնարեց և յօրինեց նորաձեւ ժամացոյց-
ներ: Յաջորդ քայլը եղաւ իր գիւտը
սորվեցնել իր եղբայրներուն: Ընդու-
նեց նաև ուրիշ երիտասարդներ: Ան-
շահախնդրութեամբ մը բոլորին ալ քաժ-
նեց իր գործին գաղտնիքը: Քաջալիւրեց
տաղանդը և վարձատրեց աշխատասի-
րութիւնը: «Աշխատանքի բաժանումի»
եղանակն ալ հնարեց ու հաստատեց:

Ամուսնացաւ և հայր եղաւ պատուա-
ւոր ընտանիքի մը: Յաջողութեան հե-
տեւեցաւ վարձատրութիւնը. հարստա-
ցաւ, և իր հարստութիւնը յատկացուց
բարեգործութեան: Եկեղեցի ու դպրոց
կանգնեցուց, իր հայրենակիցներուն
կենցաղը բարձրացուց: Բարոյական
մեկենաս մը եղաւ:

Ալեւոր ծերունի մըն էր Դանիէլ, երբ
մահը իրեն հանդիպեցաւ, չըջապատ-
ուած հանրութեան յարգանքով, բարե-
բարի փառքով և տաղանդաւորի հաժ-
բաւով: Իր հայրենիքը յիշատակը յա-
ւերժացուցած է յուշարձանի մը խորհրդ-
դանշանովը, որը կը կանգնի այսօր իբր
պերճայայտ վկայութիւնը երիտասարդի
մը ինքնատիպ տաղանդին, գիտելու
կարողութեան, կամքի զօրութեան և
աշխատասիրութեան:

Բ. Մ. Ն.

ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Գոլէճի մասին գրել, և անոր քառասնամեայ գործունէութիւնը քառասուն տողի մէջ նկագրելու համարձակիլ իմ կարողութենէս վեր գործ մըն է, որ կը նշանակէ ովկիանոսը դոյլի մէջ լեցնելու յանգզնիլ: Այսուհանդերձ կը փափաքիմ Գոլէճը ներկայ սերունդին ծանօթացնել և անցեալը ներկայի հետ կապել, յիշելով Գոլէճի մէջ անցուցած եօթնամեայ ուսանողական կեանքիս միջոցին ստացած իմ կարգ մը տպաւորութիւններս և մտքիս մէջ պահած մի քանի յուշերս:

1902ին էր, Այնթապի Գաղազըզ կոչուած գետակին ծառագարդ ափերը պըտոյտի ելած էի, ուր Գոլէճի աշակերտներուն խաղալը տեսնելով անոնց քովը գացի: Անոնց արապիլի սրունքին նմանող սրունքները եւ նեափի նման ուսուցիչները այնչափ ուշադրութիւնս պըրաւեցին, որ սկսայ զանոնք հիացումով և քիչ մ'ալ նախանձով դիտել, իբր թէ անոնք գերմարդկային էակներ ըլլային. և ըսի, իցիւ թէ ես ալ ասոնց դպրոցը կարենայի երթալ և աշակէս խաղալ սորվիլ: Մի քանի տարի ետքը Այնթապի կրօնական արթնութիւնը ծագեցաւ: Պերճախօսութեամբ և ջերմեռանդօրէն խօսողներուն և աղօթողներուն մէջ դարձեալ Գոլէճականները այնչափ ուշադրութիւնս դրաւեցին որ սրտիս մէջ փափաք մը արթընցաւ անոնց պէս կարդացող ըլլալու և այսպիսի պերճախօսութեամբ արտայայտուիլ կարենալու համար, ես այն տահն 16 տարեկան էի և 7-8 տարի առաջ դպրոցէն ելած էի: Այս փափաքը այնչափ սաստկացաւ իմ մէջս որ առաւօտ մը Փրօֆ. Զ. Ա. Պէղճեանի տունը դացի ու դպրոց երթալու փափաքս անոր յայտնեցի:

—Քանի՞ տարեկան ես, հարցուց փըրօֆէսօրը:

—Տասըվեց:

—Հիմա ի՞նչ գիտես:

—Ութը տարի առաջ դպրոցէն ելայ, այդ ատենէ իվեր բան մը կարդալու առիթը չունեցայ, զիտցածիս մեծ մասը մոռցած պէտք է ըլլամ, պատասխանեցի:

—Տղա՛ս, փափաքդ լաւ է, բայց տարիքդ յառաջացած է և մաշալլա խոշոր ալ մարմին ունիս. կ'երեւի թէ վարժուհիի մը քով յաճախելու պիտի ստիպուես, բայց պատիկները քեզմէ կը վախճան, ըստ փրօֆ. ը. ուսկսաւ զլուխը շարժել և մէկ մատովը մօրուքը քերել:

Դիւրութեամբ իր օձիքը ազատ չթողուցի: Եւ փրօֆ.ն ալ փափաքիս հանդէպ անտարբեր եւ անհամակիր չգըտնուեցաւ. հետս խօսակցեցաւ, խորհեցաւ և վերջապէս իմ մասին յանձնարարողի մը գրեց որ եթէ կարելի է զիս վարժապետներու ձեռքով կառավարուող դպրոցը ընդունին. վերջապէս յաջողեցայ 10-11 տարեկան մանչերու հետ դպրոց յաճախել:

Երկու տարուան միջոցին չորս տարուան աշխատանքը թափելով վերջապէս հասաւ այն օրը՝ երբ ուսանող արձանագրուեցայ: Անկտրելի է ինծի մոռնալ այն ժամը երբ Գոլէճի՝ շրջապատին մեծ դռնէն ներս մտայ: Ինքզինքս երկինքի փողոցներուն մէջ ըլլալ կը կարծէի, հպարտութենէս եւ ուրախութենէս կուրծքս թիղ մը վեր բարձրացած պէտք է ըլլայ: Ձեռքս վիճակացոյցս առնելով սենեակէ սենեակ կը պտըտէի և մուտքի քննութեան հարցումներուն կը պատասխանէի: Առաջին անգամ Տր. Ֆլուրին ներկայանալով Ս. Գրքէն քննութիւն տուի. Աբրահամի հօր անունը ի՞նչ է, Յակոբ քա՞նի մանչերուն էր, Յովսէփ ո՞ւր մեռաւ, և այլնի նման հարցումներուն տուած պատաս-

խաններս շատ լաւ գնահատեց: Վերջէն հասկցայ թէ Տր. Ֆլուրին ականջները վնասուած ըլլալով ցած ձայնով արտասանուած պատասխանները իբր անսխալ կ'ընդունուէին, նոյն իսկ եթէ անոնք սխալ ալ եղած ըլլան:

Կարգը եկաւ փրօֆ. Ալեքսան Պէդճը-եանի կողմանէ քննութեան թուարանութեան մէջ: Լաւ պատրաստութիւն չունէինք արդէն, միւս կողմէն երեւակայելով այս պատկառելի անձնաւորութեան մօրուքը, դէմքը, յօնքերը և զըլուխը կը վախնայի թէ մի գուցէ միտքս իր ճամբան կտրսնցնէ: Բայց երբոր ներս մտայ բոլորովին տարբեր կացութեան մէջ գտայ ինքզինքս, տեսայ թէ այդ անազգու յօնքերուն տակ սիրափայլ աչքեր և ժպտուն դէմք մը կան: Իր զիտական հմտութեան հաւասարող իր զաստիարակչական կարողութիւնը առաջին քրէն մեր ուշադրութիւնը գրաւեց: Չեմ յիշեր թէ ինծի ինչպի՛սի հարցումներ ուղղուեցան և ես ինչպի՛սի պատասխաններ տուի, բայց շատ լաւ կը մտաբերեմ ընկերներէս մէկուն հարցուց թէ մէկ քիլօմէթրը որչա՛փ երկայն է, որուն պատասխանելով տղան ըսաւ թէ մէկ կանգունէն քիչ մ'աւելի է: «Ուրեմն հասակդ քանի՞ քիլօմէթր երկայն է տղաս», դարձեալ հարցուց Փրօֆէսօրը: Տղան ոտքէն մինչեւ գլուխը ինքզինքը լաւ մը չափելէ վերջ ըսաւ. «Մէկ ու կէս քիլօմէթր երկայն է, վարժապետ»: Ասոր, Փրօֆէսօրը զըլուխը քիչ մը ծռեց, ակնոցին չըջանակին վրայէն քննող ականարկ մը նետելով «Ուրեմն դուն նստէ տղաս, տակաւին շատ ժամանակ պէտք որ մենք քու հասակիդ կարենանք հասնիլ», ըսաւ ու խնդացուց բոլոր աշակերտները:

Ասկէ վերջը Անգլերէն լեզուի քննութիւնը տալու համար Փրօֆ. Ճ. Սաթոսեանի սենեակը գացինք: Այս յարգելի դէմքը, իր ակնոցովը, անոր ետեւ

փայլուն և թափոնցող ականակ ունեցող աչքերովը, իր փշանման ուղղաթել պիսիւրովը որոնք արմատէն յօտեալ որթատունկի նորարոյս ճիւղերուն կը նըմանէին, անազգու կերպարանք մը կը ներկայացնէր նորեկներու համար: Հազիւ թէ սենեակը մտած էինք անգլերէն բաներով, որոնց կէսը այն ատեն չէինք հասկնար, զինուորական խիստ մարզանքի մը ենթարկուեցայ, յառաջ եկուր, ետ գնա, ինծի նայէ, աջ դարձ, զէպի ձախ վազէ, կարծես թէ զինուորական մարզավայր մը մտած ըլլայի: «Այս գասին ըսիլիք չկայ, եթէ ընթերցում և զրուսր պարտականութիւններ չկան», կ'ըսէի ինքնիրենս: Լաւ որ ապագային ականակութիւնս չիրականացաւ և քիչ շատ անգլերէն կրցայ սորվիլ:

Վերջապէս բոլոր ուսուցիչներու սենեակները պարտեցայ, քննութիւն տուի և իբր աշակերտ արձանագրուեցայ: Եւ ա՛յ ուսանողի մը կատարեալ ազատութեամբը ճօճքի վրայ կը ճօճէի, կից-գունդ և միջոց կը խաղայի, այս անգամ ալ ես ուրիշներու հիացում պատճառելով: Գոլէճական կեանքս սակայն, միայն խաղով և գրօսանքով չանցաւ, որոնք անցեալի մեր ամէնէն նուիրական և թանկագին յուշերը չեն կազմեր երբէք: Գոլէճի զուլալ ջուրը և մաքուր օդը, հոյակապ շէնքը, ականապարօյր տեսարանը, խաղերն ու գրօսանքները չէին որ գոլէճական կեանքը մեզի թանկագին ըրած էին, այլ անոր ներսը տիրող կարգապահութիւնը, նախագահին և փրօֆէսօրներուն իմացական կարողութիւնն ու հոգեկան արհեստութիւնը, ամէն օր անգիտակցաբար անոնց մեր վերայ թողուցած հոգեւոր ազդեցութիւնները, մէկ խօսքով բուն իսկ կեանքը և գայն ապրելու մասին անոնց մեզի տուած դադափարտականներն ու հայեցակէտը. — անա ասոնք էին որ մեզ կը կախարդէին և մեր սիրտերը Գոլէճի կը կապէ-

ին: 1908 ին, սահմանադրութեան հռչակման տարին, երբ բոլոր ուսանողութիւնն ազատութեան զինիովը գինովցած էր, մեր փրօֆէսօրներէն մէկուն պատկառազգու և լուրջ թոնով մը արտասանած սա խօսքերը անմոռանալի են. «Բարեկամներս, լաւ գիտցէք որ անբարոյական կրթութիւնը յիմարութենէն աւելի վատ ևւ տգիտութենէն աւելի վնասակար է:» Կ. Թ. Գոլէճ ահա այսպիսի ուսուցիչներով լեցուած էր: Այս պարագան իր բոլոր մանրամասնութիւններովը նկարագրել այնքան դժուար է, որքան որ մեծ բախտ և առանձնաշնորհում մ'է տարիներ միտսին ապրիլ այս մեծ դատարարակներու հետ, զտուիլ անոնց քուրային մէջ և ձեւակերպիլ անոնց հարուածներուն տակ, այսպիսի փորձառութիւն ունեցող մը միայն զայն կրնայ հասկնալ և տարիներ անցնելէ վերջը զայն իրապէս կրնայ գնահատել:

Գոլէճի անցեալի մէջ անոր զործունէութեան, անոր ոսկեգարին, նախագահին, փրօֆէսօրներուն և անոնց յատկանշական գիծերուն մասին կարելի է շատ քանի գրել, զոր կը թողունք աւելի կարող գրիչներու և հին դէմքերու, և եւ կուզեմ բոլոր զգացումս ամփոփել հետեւեալ կերպով. — Երանի՛ անոնց որոնք յաջողած են Պէլճեանի, Լեւոնեանի, Գրիգորեանի, Փափազեանի, Րիկզի և անոնց զործակիցներուն առեն Գոլէճի մէջ ուսում առնել, և երանի անոնց որոնք պիտի կրնան ուսում ստանալ ապագայ Հալէպի Գոլէճին մէջ, նոյն տնօրէնութեան տակ և նոյն ծրագիրով:

Իմ պաշտելի Կ. Թ. Գոլէճ,
Դու գիտութեան արեւ անշէջ,
Հազար երնէկ այն օրերուն
Որ ապրիցանք զրկացող մէջ:
Կը մաղթեմ որ դարձեալ չողաս
Եւ քու փայլդ ըլլայ անվերջ:

Ս. ԼՍԼԷՆԱՆ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԹԻ ԻՆՉՊԷՍ ՀՐԵԱՅ ԱՂՋԻԿ ՄԸ
ՅԻՍՈՒՍԸ ԳՏԱԻ

Փ. Սմոլճաւ, որ Րիկայի մէջ Հրեաներու մէջ գործող Միսիօնարական մարմնի մը կը պատկանէր, իր կնոջ քրիստոնէութեան դարձը այսպէս կը պատմէ:

Մանկութենէն իվեր միշտ ուշիմ աղջիկ մը եղած է ան: Իր ցեղին տառապանքը, մանաւանդ Ռուսիոյ մէջ, իրեն խորհիլ կուտար թէ անպատճառ քրիստոնեաները Հրեաներէն լաւ Աստուած մը ունենալու էին, քանզի քրիստոնեաները ամէն կերպով հանգիստ էին, մինչ Հրեաները — որոնց շատերը թէպէտ հարուստ էին, — կեանքը անտանելի կը գտնէին: Տասներեք տարեկան եղած ատեն լսեց թէ խեղանդամ երիտասարդ մը, Չերմեռանդ քրիստոնեայ մօր մը զաւակը, Տէր Յիսուսի հաւատալով և աղօթելով նոր մարդ մը եղած էր: Սըրտին մէջ անմիջապէս փափաք մը արթնցաւ Յիսուսի հաւատալու և ամէն պարագաներու տակ իր պէտքերուն համար Անոր գիմելու:

Այս փափաքը իր մէջ երկար ատեն վառ չմնաց. ան կամաց կամաց վարժուեցաւ կեանքի մոլթ կողմը միայն զիտելու: Քիչ վերջը իր հօրը մահը սեղի սաստկացուց իր այս միտումները, այնպէս որ 18 տարեկան եղած ատեն կատարեալ յռետես մը դարձած էր: Սոր հետեւեցան Ռուսիոյ 1905ի զէպքերը, որոնց միջոցին Հրեաները շատ տառապեցան և ինքն ալ իր եղբայրը կորսնցուց: Ա՛լ կեանքը անտանելի դարձած էր իրեն համար. և պատրաստ էր անկէ բաժնուելու անձնասպանութեամբ, որուն համար միակ արգելքը իր մօրը հանդէպ տածած սէրն էր, քանզի չէր ուզեր անոր ոչ պատիւը արատաւորել և ոչ ալ անոր սիրտը տանջել:

Շատ երկար խորհելէ վերջ անձնասպանութեան դիւրին կերպ մը գտաւ: Այն ատեն Օտէսայի մէջ, ուր ինքը կը բնակէր, «Ճշմարիտ Ռուսեր»-ու ակումբ-ները կային, որոնց գտնուած թաղին մէջէն իսկ անցնող Հրեայ մը մահով կը պատժուէր: Որոշեց ոչ միայն այդ թաղը երթալ, այլ բուն իսկ ակումբին շէնքը մտնել իր երազած և ակնկալած մահը գտնելու համար: 1908ի օր մըն էր. 21 տարեկան մանկամարդ աղջիկը տունէն բաժնուեցաւ և զնաց այն թաղը ուր կը կարծէր թէ «Ճշմարիտ Ռուսեր»-ու ակումբը կը գտնուէր: Հիւռուէն տեսաւ լաւ լուսաւորուած շէնք մը, դէպի ուր բոլոր մարդիկ կ'երթային: Ինքն ալ հոն ուղղուեցաւ և շէնքէն ներս մտաւ: Բայց աղջիկը մեծապէս վարմացաւ երբ հակառակ իր ակնկալութեան բարեացակամ և սիրալիւր վերաբերումի կենթակայ եղաւ, քանզի փոխանակ ատելավառ Ռուսերու ակումբը մտնելու Աստուծոյ առաջնորդութեամբ Աւետարանական Ռուսերու ժողովարանը մտած էր: Իր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով Աւետարանի լոյսը իր սիրտը թափանցեց, և քարոզչին բնաբանը, Մատթ. 11.58, իրեն համար նոր կեանքի մը աղբիւր եղաւ: Ան ոչ միայն երկրային կեանքով սկսաւ հետաքրքրուիլ, այլ ջերմ կարօտը զգաց յաւիտենական կեանքի: Սկսաւ ուսումնասիրել Աստուածաշունչը, և յաճախեց քրիստոնեայ Հրեաներու ժողովարանը, և գտաւ Յիսուս Բրիստոսը, որ զինքը երջանիկ ըրաւ:

ՏԵՐԸ ԿԸ ԾԱՓՈՀԱՐԷ

Քաղաքի մը մէջ ի նպաստ բարի նըպատակի մը ժողովրդային հաւաքոյթ մը սարքուած էր: Ատենապետը նուիրատուներու մէկ ցանկը կը կարդար: «Տիար այսինչ, 50 ոսկի» Ուժգին ծափահարում: «Տիար այնինչ, 20 ոս-

կի», ծափեր, «Տիար այսինչ, վեց դրութեւ» Կատարեալ լուսթիւն: Այս պատիկ նուէրին, որ թերեւս ուէէ մէկուն չափ մեծ գոհոյութեան մը արդիւնքն էր, տրուած պաղ ընդունելութեան աղղուած, ատենապետը այդ խոր լուսթիւնը խանդարելով կանչեց. «Լուսկեցէք, կ'ըմեմ ևս Ծափեալ ձեռքերուն ծափահարումը կը լսեմ» Ունկնդիրները խորապէս աղղուեցան այս արդար յանդիմանութենէն:

ՈՐՆ Է ԷԱԿԱՆԸ

Ամերիկեան քաղաքային պատերազմին միջոցին բարեմիտ մարդ մը նախագահ Լինքոլնի այսպէս ըսաւ. «Մենք վստահ ենք որ Աստուած մեր կողմն է» «Ես այդ այնքան էական չեմ նկատեր. ևս աւելի կը հետաքրքրուիմ զիտնալու թէ արդեօք մենք Աստուծոյ կողմն ենք» պատասխանեց Լինքոլն: Որչափ պէտք ունինք ներկայիս այս պատմութեան յայտնած ճշմարտութեան:

ԻՆՉՈՐԻ ԿՐԾՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՍ

Մարդ մը Սփըրճընի վրանին մէջ, ուր կրօնական հաւաքոյթներ կը սարքուէին իրեն համար տեղ մը ապահովելու անձկութեամբ զիմեց մեծ քարոզչին: «Տէ՛ր, կ'ուզեմ զիտնալ թէ կարելի՞ է յուսալ որ ես դարձի գամ, եթէ ես տեղ մը նստիմ» «Անշուշտ վստահ եմ որ դարձի պիտի գաս, և ես պիտի աղօթեմ որ այդպէս ալ պատահի, կ'առարկեմ» պատասխանեց Սփըրճըն: «Ոչ, Տէ՛ր» ըսաւ մարդը. «Ճիշդ բողոքանքս այդ է. ես հոս նստիլ կ'ուզեմ սոյոյսով որ անձնապէս փրկուիմ» Դուն ի՞նչ նպատակով կը նստիս եկեղեցիին նստարանին վրայ:

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՍԻՆԱԿԸ

ԱԿԱՄԱՅ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Շնորհաւորելի են Քէսապի մէջ գումարուած Սուրբոյ Հայ Աւետ. Միութեան կատարած ուսումնասիրութիւններն ու աշխատութիւնները՝ եկեղեցական, կըրթական եւ այլ գործերու նկատմամբ, բայց բարձր թողի եղած է եկեղեցիներու բեմերուն հայացման գեղեցիկ գործը: Այս մասին առաջարկ մը անգամ չէ եղած: Եւ ի՞նչպէս պիտի ըլլար, քանի որ բոլոր խորհրդակցութիւններն ու արձանագրութիւնները թրքերէն լեզուով եղած են ժողովի ամբողջ տեղութեան:

Ես, իբրեւ Հայ Աւետ. համայնքի մէկ զաւակը, պիտի ուզէի հասկնալ՝ թէ ա) բեմերուն հայացուելուն համար ասկէ առաջ եղած առաջարկներն ու յայտնուած բազմաքննիքը ինչո՞ւ աննկատ թողուած են, ք) ի՞նչ բան արգելք կը հանդիսանայ բեմերու հայացման:

Եթէ Աւետարանը ժողովուրդին հասկընալի լեզուով քարոզելու սկզբունքը որդեգրած ենք, ինչո՞ւ ուրեմն մեր պատուելիներն ու քարոզիչները քարոզի առին կը շարժուին թուրքերէն զրական այնպիսի նախադասութիւններ զոր հասկընալու համար գէթ թրքական նախակրթարան մը աւարտած ըլլալու հն բոլոր ունկնդիրները:

Եթէ ժողովուրդին մեծամասնութիւնը թրքախօս է, կարելի չէ՞ Հայերէնը ընդհանրացնել ժողովուրդին մէջ, սէր եւ գուրգուրանք ստեղծելով հանդէպ մեր մայրենի այնքան քաղցրահնչուն լեզուին:

Պատուելիներն ու քարոզիչները հայերէն քարոզելու անկարող են: Շատ կը սիրեմ յուսալ թէ չեն, բայց եթէ են, թող հաճին օրինակ առնել թուրքիոյ արեւելեան նահանգներուն մէջ աշխատող Ամերիկացի միսիօնարներէն, որոնք վեց ամսուայ կարճ ժամանակի մը մէջ Հայու

մը չափ հայերէն սորվելով մեր զրահանութեան մէջ իսկ կրցած են փայլել: Զոր օրինակ Մր. Ալէն, Մր. Մէքալմըմ եւ ուրիշներ, որոնք ժամանակին կ. Պոլսոյ «Աւետաբեր»ի խմբագիրները եղած են: Մեր քարոզիչները այս մասին քիչ մը ջանք թող հաճին ընել, ես կը վստահեցնեմ զիրենք որ անկասկած պիտի յաջողին:

Մեր ազգին գիտակից եւ նշանակելի մէկ մասը ըլլալով՝ կարեւոր պատճառներ ունինք թրքերէնը խալաւ վտարելու մեր մէջէն:

Ինձի եւ ինձի նման խորհողներուն գուցէ առարկուի թէ մեր ազգին միւս հատուածներն ալ մեզի պէս ու մեզի չափ այդ լեզուն կը գործածեն տակաւին: Մենք բարի օրինակ հանդիսանանք անոնց:

Հայ Աւետ. բոլոր եկեղեցիներուն բեմերէն շարժքը անգամ մը կարելի չէ՞ մեր մայրենի քաղճրահնչուն լեզուով քարոզ. երգեցողութիւն լսել:

Պէյրուք

ԵՐՈՒԱՆԴ Լ. ԱՂԵԿԵԱՆ

Այս կարեւոր հարցը, զոր կ'արժէ յիշօրէն նկատի առնել, առնչութիւն ունի թէ՛ անհատ եկեղեցիներու հետ մասնաւորապէս, եւ թէ՛ Միութեան հետ ընդհանրապէս, ինչպէս որ կը յայտնուի վերի «գիտողութեան» մէջ:

Հայ Աւետ. Միութեան ժողովը, բազմապէս ըլլալով անգլիախօս, թրքախօս եւ հայախօս անդամներէ, խորհրդակցութիւնները կատարելու համար բնական ստիպում մը կը ծագի ընդհանուրին ծանօթ հասարակաց լեզու մը գործածելու մասին, որ յիշուած պարագային մէջ թրքերէն է: Հակաքաղաքավարական և անիմաստ պէտք է նկատուի ասոր հակառակ շարժումը, ինչպէս որ անիմաստ և անպատուաբեր պէտք է նկատուի գուտ հայերէնազէտ հայերէ բազկացած ժողովի մը մէջ սեւ օտար լեզու մը զործածելը:

Անհատ եկեղեցիներուն զաւով՝ ա-
նոնք բացարձակ ազատութիւն ունին ի-
րենց պաշտօնական և բնիկ լեզուն ընտ-
րելու մէջ. և ասոր համար ժողովուրդը
ինքը պատասխանատու է, որ իր շահը
նկատի առնելով պէտք է իր լեզուն ու-
րօշէ: Գրեթէ մեր բոլոր քարոզիչները
առաւել կամ նուազ զիւրութեամբ կըր-
նան թէ հայերէն և թէ տաճկերէն լե-
զուններով խօսիլ բնիկն: Եթէ ժողովուր-
դին հոգեւոր շինութեան համար անհը-
րաժեշտ կը դառնայ հայերէն լեզուով
քարոզել, անկարելի է այս մասին կար-
գադրութիւններ ընել, և պէտք է ընել,
ինչպէս որ մի քանի Հայ Աւետ. եկեղե-
ցիներ կ'ընեն տաճկէ մը ի վեր:

Ներկայ թրքախօս սերունդին, քիչ
վերջը, պիտի յաջորդէ նոր սերունդ մը,
որ տաճկերէն չի հասկնար, կըթուած
ըլլալով բացարձակապէս հայախօս զրպ-
րոցներու և ընկերակցութիւններու մէջ.
և այն տաճկ հարցին լուծումը աւելի
զիւրին կ'ըլլայ: Ասելի արդիւնք կը
խոստանայ այս ուղղութեամբ — նոր սե-
րունդը հայերէնով կըթիտու մէջ — կա-
տարուելիք զործը:

Մ. Խ.

ԱԻՅՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՅՐԱՆՍԱՆԱԿԱՆ ԱԻՅՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
Գ. ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ

Ֆրանսայի Հայ Աւետ. Միութեան Գ.
ատարեկան ժողովը տեղի ունեցած է
Սիպտ. 9-12ին, Լիօնի մէջ, մասնակցու-
թեամբ 7 եկեղեցիներէ 13 ներկայացու-
ցիչներու և 6 հիւրերու: Կարգացուած
են եկեղեցիներու տեղեկագիրները, Մը-
կըրտութեան և Հաղորդութեան խնդիր-
ները երկար խորհրդակցութեան նիւթ
եղած են, և Միութեան սահմանադրու-
թեան երեք կէտերուն մէջ բարեփոխու-
թիւններ կատարուած են:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ
ՓՐՕՖ. ԼԵՒՈՆԵԱՆ

Հոկ. 6 ին Աթէնքին մէջ, բացուած
խաղաղութեան խորհրդածողովի մը մէջ
Փրօֆ. Լ. Լիւոնեան Անգլիոյ Գուէյքըր-
ներուն կողմանէ իբր ներկայացուցիչ
Ներկայ գտնուած է:

Հոկ. 4 ին Տր. Ֆ. Կուտսէլ, մի քա-
նի ամսուան համար Աթէնքէն Ամերիկա
մեկնած է ընտանեօք:

ՀՈՄՍԻ ՔԱՐՈՁԻՉԸ

Հոմաի Հայ Աւետ. Եկեղեցւոյ հովիւը
Պատ. Վարդան Բէօթէքլեան վերաբու-
ժական զործողութեան մը ենթարկուած
է իր ունեցած աղիթափութեան պատ-
ճառաւ: Տասներկու օր հիւանդանոց
պառկելէ վերջ ուրախ ենք որ կատարե-
լապէս բուժուած է:

ՆՈՐ ՈՅԺԵՐ

Հալէպի մէջ Պօրտի Միութնորական
մարմինն վրայ նոր մնայուն անդամ աւել-
ցած է յանձին Մր. Եւ Միսիս Էտքինզի,
որոնք պատերազմէն վերջ երեք տարի
աշխատած են Թուրքիոյ մէջ: Բարի
գալուստ կը մաղթենք:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքներէն Չարչ Տիլմուի
գրուածներէն

ԳԼՈՒԽ Բ.

ԵՐԵՎԱՆԻ ՈՐԴԵՆՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԻՆԸ

Երբ Սքրուճ արթնցաւ, այնքան
մութ էր որ պատուհանին թափանցիկ
ապակիները չէր կրնար զանազանել սին-
եակին պատերէն. աչքերը լարած կը
ջանար սենեակին մէջ բան մը տեսնել.
Երբ մօտակայ եկեղեցիին ժամացոյցը ըս-

կսաւ զարնել: Սքրուճ մէկիկ մէկիկ հարեւելով հասաւ մինչեւ 12: «Վայ», զոչեց, «կէս զիշիօ՞ր, բայց միթէ կարելի՞ է միթէ կարելի՞ է որ ամբողջ ցորեկը քնացած եւ քունս չարունակած ըլլամ մինչեւ յաջորդ զիշերուն ժամը 12ը:» Ու սկսաւ անձկանօք մտածել: Արդեօք կէս օր էր, սո արեւին բան մը պատահելով խաւարած էր այդ օրը:

Այն առին միտքն եկաւ Մարլիի տղին: «Արդեօք երազ չէր՞» ըսաւ ինքն իրեն, ու նորէն թաղուեցաւ անուշիկ եւ բեւեակալութեան մէջ: Յանկարծ ժամը երեք քառորդը զարկաւ: Սքրուճ յիշեց ինչ որ ոգին իրեն ըսած էր, թէ այն գիշերը ժամը մէկին ոգի մը պիտի այցելէր իրեն, ուստի որոշեց արթուն պառկած սպասել ոգիին: Այդ մէկ քառորդ ժամը իրեն այնքան երկար թուեցաւ որ կարծեց թէ մտափոք ու ժամանակը արդէն անցուցած էր: Վերջապէս ժամը մէկը զարկաւ: Անմիջապէս սենեակին մէջ լոյս մը փայլատակեց, եւ իր անկողնոյն վարագոյրները ետ քաշուեցան, ձեռք մը զանոնք քաշելով բացաւ անկողինը, եւ Սքրուճ կէս քուն վիճակի մէջ եղողի մը զգացումով տեսաւ ճիշդ իր դէմը այն՝ որ վարագոյրները քաշեր էր: Անիկայ տարօրինակ երեւոյթ մը ունէր. մանկան մը կը նմանէր, սակայն եւ այնպէս մանուկէ աւելի ծերունիի նմանութիւն ունէր. գերբնական, անբացատրելի բան մ'ունէր. երկայն մազերը ճերմկեր էին ծերունիի մը մազերուն պէս, մինչդեռ դէմքին վրայ ամենեւին կնճիւռ մը չըկար, մանկան երեսին նման փափուկ ու կտրմիր. թեւերը շատ երկայն ու ջղոտ էին ու անսահման ոյժ մը կը ցուցնէին. իր սրունքներն ու ոտքերը բաց էին. մաքուր ճերմակ վերարկու մը հագեր էր, եւ մէջքին վրայ փալփուռն գօտի մը ունէր. ձեռքը ձիթենիի կանանչ ճիւղ մը կար, ու հագուստը գարնան ամէնէն անուշահոտ ծաղիկնե-

րով զարդարուած էր, սակայն ամէնէն զարմանալին սա էր որ իր զլխուն գաթին լուսոյ ճառագայթ մը կ'ելէր, որուն միջոցաւ իր ամբողջութիւնը տեսանելի կ'ըլլար. թեւին տակ զլխարկ մ'ունէր, զոր անտարակոյս կրնար ուղած առին գործածել այս լոյսը մարելու համար, եթէ միայն գայն իր զլուսը դնէր:

«Տէր իմ», ըսաւ Սքրուճ, «դուն այն ոգի՞ն ես, որուն այցելութիւնը կանխաւ ինծի ծանուցուած էր:»

—Այո:

Ոգիին ձայնը մեղմ ու փափուկ էր. մասնաւորապէս ցած, այնպէս որ հաւանակ իր այնքան մօտ ըլլալուն հետեւն եկած կը թուէր:

«Ո՞վ կամ ի՞նչ ես դուն», հարցուց Սքրուճ:

—Ես անցած Ծննդեան Ոգին եմ:

Աս ըսելով երկնցոց իր զօրաւոր ձեռքը եւ արքունի թեւէն կամայ մը բռնելով՝ «Եւ, ու ինծի հետեւէ», ըսաւ:

Անօգուտ պիտի ըլլար եթէ Սքրուճ առարկութիւն ընէր թէ այդ ցուրտ օգին ու զիշերուն այդ ժամուն յարմար չէր պտոյտի ելլել, թէ անկողինը աւելի տաքուկ էր, թէ հագածը զիշերանոց էր, թէ հարբուխ ունէր:

Ոգիին բռնուածքը թէեւ կնոջ մը բռնուածքին պէս մեղմ էր, սակայն եւ այնպէս անդիմադրելի ոյժ մը կը պարունակէր:

Ոտք ելաւ, ու ոգիին հետեւեցաւ, սակայն որքան մեծ եղաւ զարմանքը երբ տեսաւ որ ոգին փոխանակ դէպ ի դուռն երթալու դէպ ի պատուհանը յառաջացաւ: Յայնժամ Սքրուճ ծունր դնելով ազիրսեց. «Ո՞հ, ես մահկանացու մըն եմ, հետեւաբար չեմ կրնար թռչիլ:»

—Երբ իմ ձեռքս քեզ բռնած է՝ մի վախնար, չես իյնար, ըսաւ ոգին:

Հազիւ այս բառերը արեւոտանուած էին՝ երբ պատերէն անցան, ու ինք-

զինքնին գտան փոքր զիւղի բաց ճամբու մը վրայ. երկու կողմը դաշտեր տարածուած էին. իսկ քաղաքը աներեւոյթ եղեր էր բոլորովին. մութն ու մառախուղը ևս աներեւոյթ եղեր էին, որովհետեւ ձմեռուան պարզ, ցուրտ ու մաքուր անոտ մըն էր, գետինը ձիւնով պատած:

«Տէ՛ր Աստուած», բացաղանջեց Սքրուճ, մինչ չորս կողմը կը դիտէր, «ես կը ճանչնամ այս տեղերը, ես այս տեղ մեծցած եմ, իմ մանկութիւնս հոս անցուցած եմ:»

Ոգին մեղմիւ անոր նայեցաւ. կամաց մը ձեռքը թող տուաւ, ու հիմա ճամբուն մէջ քով քովի կը քալէին. օդին մէջ հազարաւոր բուրուճներ կ'զգացուէին, ու անոնց ամէն մէկը տարբեր խորհուրդներ, տարբեր յոյսեր, տարբեր ուրախութիւններ և տարբեր հոգեր կը բերէին Սքրուճի անցեալ կեանքէն, որոնք ինք շատոնց մոռցած էր:

— Կրնա՞ս զերյիշել այս անգիւրը, հարցուց ոգին:

«Ինչպէ՛ս չը յիշեմ», պատասխանեց Սքրուճ, «աչքս դոց կրնամ քալել:»

— Ո՛չ, մոռցած ես, և ցաւալի է որ այնքան դիւրաւ մոռցեր ես:

Ու քալեցին, քալեցին մինչև որ հասան փոքր արահետ մը, որ շատ լաւ ծանօթ էր Սքրուճին, և քանի մը քայլ ևս՝ ու ահա տան մը զրան առջեւն էին: Այս տունը մութ կարմիր աղիւսով շինուած էր, խեղճուկ երեւոյթով ու փոքր: Ներս մտան, սրահէն անցան ու կանգ առին դրան մը առջեւ. դուռը խիտն րացուեցաւ. մեղմաղճոտ սենեակ մը, փուսնիկը հին ու մեծ, ցուրտ ու մերկ տպաւորութիւն, սակայն ան ամէնէն մեծ ամէնէն աւելի աչքի զարնողը աղքատիկ պատանի Սքրուճն էր որ միս մինակ նստէր կը կարդար: Սքրուճի սիրտը չը զիմտցաւ, երբ իր աղքատ մանկութիւնը տեսաւ ամէնէն մօտ նստարան-

ներէն միայն վրայ ինկաւ, ու դռնաւ պէս լացաւ: «Երանի թէ...» ու բռնեցր կիսկատար մնացին, Սքրուճ կը հեծկլտար: «Երանի թէ» ըսաւ ու ձեռքը գրպանը խոթեց, յետոյ հագուստին թեւովը արցունքը սրբեց չորսդին նայեցաւ:

— Ինչ կայ, ինչ եղար, հարցուց ոգին:

«Բան մը չը կայ, բան մը չը կայ», ըսաւ Սքրուճ, «երեկ իրիկուն աղայ մը եկաւ խանութս, Ծնունդը չնսրհաւորեց, կը փափաքէի բան մը նուիրել իրեն, ուրիշ բան չը կայ:» Սքրուճ կուլար տակաւին:

Ոգին խորհրդաւոր կերպով ժպտեցաւ, ու գլուխը շարժեց մեղմիւ, ըսելով, «Եկուր ուրիշ Ծնունդի տեսարան մը դիտենք:»

Հագիւ այս խօսքերը արտասանուած էին, մէյ մ'ալ կարգ մը դէպքեր արագ արագ իրարու յաջորդեցին, մանուկ ընթրուճ մեծցաւ երիտասարդ եղաւ, սենեակը քիչ մը աւելի մեծցաւ ու աղարտեցաւ, պատուհանին փեղկերը կը ճռնէին ու Սքրուճի աչքին առջեւ եկաւ իր երիտասարդութիւնը: Սքրուճի խելքը չէր հասներ թէ ինչպէս այնքան շուտով դէպքերը կը փոխուէին, սակայն կը տեսնէր ու կը դարմանար որ ամէն բան ճիշդ անցեալին մէջ պատահած կարգով տեղի կ'ունենար: Երիտասարդ Սքրուճ չէր կարդար այս անգամ, այլ մըտախոհ վիճակով կ'երթեկէր սենեակին մէջ, ու մերթ Եւրո մերթ կը նայէր ներսի դրանը: Սքրուճ կը զիտէր զայն մեծ հետաքրքրութեամբ:

(Շարունակելի) (10)

صاحب الامتياز و مدير المسؤول

قنيس قره بت هاروتونيان